## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N Մ-549-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱ-ԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 18-ի N 01.1/14-2/15115-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 23-ի N 06/3-8/32071-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից (ՀՎՀՀ՝ 02566915) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-549-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ջեյթուն կահույքի ֆաբրիկա» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00809654) 2017 թվականի հուլիսի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մարզադաշտի վերակառուցման աշխատանքների իրականացում՝ 140,529,250 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-730-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 31-ի N 01.1/14-2/15902-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 4-ի N 06/3-8/33966-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) ՌԴ-ի քաղաքացի Օլեսյա Շուկինայի հետ (անձնագիր՝ 71 0324761) 2017 թվականի օգոստոսի 14-ին կնքված՝ N 01-14.08.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 725,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) Շվեյցարիայի Համադաշնության քաղաքացի Մանուելա Ֆֆրունդերի հետ (անձնագիր՝ X1545455) 2017 թվականի օգոստոսի 17-ին կնքված՝ N 01-17.08.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 720,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) Շվեյցարիայի Համադաշնության քաղաքացի Ադրիան Հյուբերգերի հետ (անձնագիր՝ X4955883) 2017 թվականի օգոստոսի 17-ին կնքված՝ N 02-17.08.17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է դասընթացի վարման ծառայությունների մատուցում՝ 720,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



4) «ՄՁՄ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01514872) 2017 թվականի օգոստոսի 18-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 200 լիտր լվացող միջոցի ձեռքբերում՝ 466,600 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ  Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-731-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ Մ Ա Ս Ի Ն

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 01.1/14-2/15922-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 4-ի N 06/3-8/33962-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Սիմոնյան» կրթական հիմնադրամի 2017 թվականի օգոստոսի 24-ի գրությունը,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «2,172,067,200 դրամ» բառերը փոխարինել «2,192,067,200 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ախուրյանի կոոպերատիվ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05801184) 2017 թվականի հունիսի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բնակելի տան վերանորոգման աշխատանքների իրականացում՝ 15,718,455 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. Սույն որոշման մասին տեղեկացնել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Սիմոնյան» կրթական հիմնադրամի գլխավոր տնօրեն
Մարի Լու Փափազյանի կողմից
«24» Օգոստոսի 2017թ

«Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ»
## ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | • Աջակցել կրտսեր խմբի (12-18 տարեկան) ՀՀ և ԼՂՀ երիտասարդներին ընդհանուր գիտելիքներ ձեռք բերել ստեղծարար տեխնոլոգիաների բնագավառում,<br>• Առանձին դասընթացների միջոցով աջակցել կրտսեր խմբի երիտասարդներին զարգացնելու իրենց տեխնոլոգիական գիտելիքները կոնկրետ ուղղություններով,<br>• Առանձին նպատակաուղղված դասընթացների միջոցով աջակցել ավագ խմբի (19-26 տարեկան) ՀՀ երիտասարդներին իրենց մասնագիտական գիտելիքների ընդլայմանը կոնկրետ ուղղություններով,<br>• Խրախուսել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին ստեղծել շփումներ իրենց հասակակից օտարերկրյա երիտասարդների, մասնագետների և արհեստավարժների հետ,<br>• Աջակցել կենտրոնի կրտսեր և ավագ խմբի անդամներին իրենց մասնագիտական տեսական գիտելիքները օգտագործել պրակտիկ, գործարար դաշտում՝ այսպիսով օժանդակելով նոր աշխատատեղերի և գործարար հարաբերությունների ստեղծմանը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Ծրագիրն իրականացվելու է Սիմոնյան կրթական հիմնադրամի սեփական միջոցների, Սեմ և Սիլվա Սիմոնյաններ հիմնադրամի, Հայկական Բարեգործական Ընդհանուր Միության, Գալուստ Գյուլբենկյան հիմնադրամի, Տնտեսագիտական կրթության և հետազոտությունների աջակցման կենտրոն հիմնադրամի, ինչպես նաև տարբեր ֆիզիկական անձանց կողմից ստացվող հանգանակությունների, նվիրատվությունների և նվիրաբերությունների հաշվին: Ծրագրի կատարողը, օգտագործելով սույն ծրագրի, ինչպես նաև նախորդ՝ "Ստեղծարար Տեխնոլոգիաների Երիտասարդական Կենտրոն" և "ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն" ծրագրերի առկա ազատ ռեսուրսները, իրականացնելու է նաև ծրագրից անկախ այլ՝ Հիմնադրամի կանոնադրությանը չհակասող ձեռնարկատիրական գործունեություն, որից ստացվող զուտ եկամուտը նույնպես ուղղվելու է ծրագրի ֆինանսավորմանը: |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Սիմոնյան» կրթական հիմնադրամ (քաղ. Երևան, Հալաբյան 16, ՀՎՀՀ՝ 01245672): |

| | | |
|---|---|---|
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրն իրականացվելու է ՀՀ-ում և ԼՂՀ-ում՝ ստեղծարար տեխնոլոգիաների բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի ընդհանուր բյուջեն կազմելու է 2,192,067,200 (երկու միլիարդ մեկ հարյուր իննսուներկու միլիոն վաթսունյոթ հազար երկու հարյուր) դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Ծրագրի շահառուներն են՝<br>• Կրտսեր խմբի 12-18 տարեկան ՀՀ և ԼՂՀ երիտասարդներ: Ծրագիրը բաց կլինի նման բոլոր շահառուների համար, որոնք ինքնուրույն կամ ծնողների միջոցով հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող ընդհանուր և կոնկրետ ուղղություններով կրթական գործունեությանը: Շահառուների ընտրությունը կլինի բաց անդամագրության միջոցով: Ծրագիրը հերթափոխության միջոցով տարվա ընթացքում կարող է հյուրընկալել հազարավոր երիտասարդներ, այն կգործի գրեթե արտադասարանային ակումբների ոճով, սակայն յուրօրինակ կրթական մեթոդներով: Որոշ դեպքերում, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով:<br>• Ավագ խմբի 19-26 տարեկան ՀՀ և ԼՂՀ երիտասարդներ: Ծրագիրը բաց կլինի արդեն իսկ որոշակի մասնագիտական փորձ ունեցող շահառուների համար, որոնք ինքնուրույն հետաքրքրություն կցուցաբերեն ծրագրի շրջանակներում մատուցվող նպատակաուղղված դասընթացներին: Որոշ դեպքերում, մասնակիցները կընտրվեն բաց մրցույթի միջոցով: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | «Թումո ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագիրը, լինելով նախորդ «Ստեղծագործական Տեխնոլոգիաների Երիտասարդական Կենտրոն» և «ԹՈՒՄՈ ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոն» ծրագրերի շարունակությունը, նախատեսվում է իրականացնել ևս 3 տարով՝ հետագայում շարունակելու նպատակով, 2017թ-ի հունվար ամսից մինչև 2019թ-ի դեկտեմբեր ամիսը ներառյալ: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագիրը պայմանականորեն կարելի է բաժանել որպես մի քանի զուգահեռ իրականացվող միջոցառումների ամբողջություն, որոնք անընդհատ իրականացվելու են հետագա երեք տարիների ընթացքում և միտված են ծրագրի նպատակների իրագործմանը, մասնավորապես՝ Ծրագրի կատարողն իրականացնելու է հետևյալ միջոցառումները.<br>• ստեղծարար տեխնոլոգիաների ոլորտում երիտասարդներին ընդհանուր գիտելիքների տրամադրում,<br>• նպատակաուղղված դասընթացների միջոցով խորացնել երիտասարդների մոտ առանձին ուղղվածության գիտելիքները,<br>• տարբեր միջոցառումների կազմակերպման միջոցով խրախուսել կենտրոնի երիտասարդների միջև շփումը,<br>Երեք տարվա համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները կազմում են 2,192,067,200 (երկու միլիարդ մեկ հարյուր իննսուներկու միլիոն վաթսունյոթ հազար երկու հարյուր) դրամ որից՝<br>• Ուղղակիորեն շահառուներին սպասարկող անձնակազմի (ուսուցանողներ, ուսմանական բովանդակության մշակողներ և մասնագետներ, վարժանքներ ստուգողներ, ծրագրավորողներ, հաղորդակցման ոլորտի աշխատողներ, խորհրդատուներ և այլն) աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -1,345,906,305 (մեկ միլիարդ երեք հարյուր քառասունհինգ միլիոն ինը հարյուր վեց հազար երեք հարյուր հինգ) դրամ:<br>• Վարչական մասի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -149,545,145 (մեկ հարյուր քառասունինը միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար մեկ հարյուր քառասունհինգ) դրամ:<br>• Նպատակաուղղված դասընթացների կազմակերպման ծախսեր – 167,040,000 (մեկ հարյուր վաթսունյոթ միլիոն քառասուն հազար) դրամ:<br>• Գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ծախսեր – 220,262,400 (երկու հարյուր քսան միլիոն երկու հարյուր վաթսուներկու հազար չորս հարյուր) դրամ:<br>• Առկա հիմնական միջոցների (համակարգչային, տեխնիկա, արտադրական և տնտեսական գույք, սարքավորումներ և այլն) և շենքային պայմանների՝ այդ թվում հիմնադրամին պատկանող առանձին բնակարանների և բնակելի տների պահպանման և վերանորոգման ծախսեր (էլեկտրական, սանտեխնիկական, հարդարման, կոյուղու վերանորոգման և շենքային պայմանների պահպանման համար անհրաժեշտ այլ նմանատիպ ապրանքեր և ծառայություններ) – 38,832,320 (երեսունութ միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր քսան) դրամ:<br>• Տարբեր միջոցառումների կազմակերպման ծախսեր – 52,112,640 (հիսուներկու միլիոն մեկ հարյուր տասներկու հազար վեց հարյուր քառասուն) դրամ:<br>• Սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերման ծախսեր – 135,360,000 (մեկ հարյուր երեսունհինգ միլիոն երեք հարյուր վաթսուն հազար) դրամ:<br>• Գործուղման ծասխեր – 68,031,360 (վաթսունութ միլիոն երեսունմեկ հազար երեք հարյուր վաթսուն) դրամ:<br>• Այլ չնախատեսված ծախսեր – 14,977,030 (տասնչորս միլիոն ինը հարյուր յոթանասունյոթ հազար երեսուն) դրամ: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | • 2017-2019թթ-ի ընթացքում 108,288,000 (մեկ հարյուր ութ միլիոն երկու հարյուր ութսունութ հազար) դրամի սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 27,072,000 (քսանյոթ միլիոն յոթանասուներկու հազար) դրամի սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 44,052,480 (քառասունչորս միլիոն հիսուներկու հազար |

| | | |
|---|---|---|
| | | չորս հարյուր ութսուն) դրամի գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 176,209,920 (մեկ հարյուր յոթանասունվեց միլիոն երկու հարյուր ինը հազար ինը հարյուր քսան) դրամի գրասենյակային, կոմունալ, փոստի, հեռահաղորդակցման և այլ համանման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 5,832,320 (հինգ միլիոն ութ հարյուր երեսուներկու հազար երեք հարյուր քսան) դրամի առկա հիմնական միջոցների (համակարգչային, տեխնիկա, արտադրական և տնտեսական գույք, սարքավորումներ և այլն) և շենքային պայմանների՝ այդ թվում հիմնադրամին պատկանող առանձին բնակարանների և բնակելի տների պահպանման, վերանորոգման ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից (էլեկտրական, սանտեխնիկական, հարդարման, կոյուղու վերանորոգման և տարածքի պահպանման համար անհրաժեշտ այլ նմանատիպ ապրանքեր և ծառայություններ):<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 33,000,000 (երեսուներեք միլիոն չորս հարյուր տասնվեց հազար մեկ հարյուր վաթսուն) դրամի առկա հիմնական միջոցների (համակարգչային, տեխնիկա, արտադրական և տնտեսական գույք, սարքավորումներ և այլն) և շենքային պայմանների՝ այդ թվում հիմնադրամին պատկանող առանձին բնակարանների և բնակելի տների պահպանման, վերանորոգման համար անհրաժեշտ ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից (էլեկտրական, սանտեխնիկական, հարդարման, կոյուղու վերանորոգման և տարածքի պահպանման համար անհրաժեշտ այլ նմանատիպ ապրանքեր և ծառայություններ):<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 50,112,000 (հիսուն միլիոն մեկ հարյուր տասներկու հազար) դրամի նպատակաուղղված դասընթացների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 116,928,000 (մեկ հարյուր տասնվեց միլիոն ինը հարյուր քսանութ հազար) դրամի նպատակաուղղված դասընթացների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 41,690,112 (քառասունմեկ միլիոն վեց հարյուր իննսուն հազար մեկ հարյուր տասներկու) դրամի տարբեր միջոցառումների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 10,422,528 (տաս միլիոն չորս հարյուր քսաներկու հազար հինգ հարյուր [illegible] դրամի տարբեր միջոցառումների կազմակերպման համար ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից: |



| | | |
|---|---|---|
| | | • 2017-2019թթ-ի ընթացքում 7,488,515 (յոթ միլիոն չորս հարյուր ութսունութ հազար հինգ հարյուր տասնհինգ) դրամի այլ չնախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռք բերում և ներմուծում արտերկրից:<br>• 2017-2019թթ-ի ընթացքում 7,488,515 (յոթ միլիոն չորս հարյուր ութսունութ հազար հինգ հարյուր տասնհինգ) դրամի այլ չնախատեսված ապրանքների և ծառայությունների ձեռք բերում ՀՀ-ից: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | Երեք տարվա համար կազմակերպչական ծախսերը կազմում են 216,256,289 (երկու հարյուր տասնվեց միլիոն երկու հարյուր հիսունվեց հազար երկու հարյուր ութսունինը) դրամ, որից՝<br>• Վարչական մասի աշխատանքի վարձատրությանն ուղղվող միջոցներ -149,545,145 (մեկ հարյուր քառասունինը միլիոն հինգ հարյուր քառասունհինգ հազար մեկ հարյուր քառասունհինգ) դրամ:<br>• Վարչական մասի գրասենյակային, կոմունալ, փոստային, հեռահաղորդակցման և այլ համանման ծախսեր – 22,026,240 (քսաներկու միլիոն քսանվեց հազար երկու հարյուր քառասուն) դրամ:<br>• Վարչական մասի հիմնական միջոցների և տարածքի պահպանման ծախսեր – 1,883,232 (մեկ միլիոն ութ հարյուր ութսուներեք հազար երկու հարյուր երեսուներկու) դրամ:<br>• Գործուղման ծախսեր – 20,409,408 (քսան միլիոն չորս հարյուր ինը հազար չորս հարյուր ութ) դրամ:<br>• Վարչական մասով տարբեր միջոցառումների կազմակերպման ծախսեր – 5,211,264 (հինգ միլիոն երկու հարյուր տասնմեկ հազար երկու հարյուր վաթսունչորս) դրամ:<br>• Սարքավորումների, համակարգչային ծրագրերի, տնտեսական և արտադրական գույքի ձեռք բերման ծախսեր – 13,536,000 (տասներեք միլիոն հինգ հարյուր երեսունվեց հազար) դրամ:<br>• Այլ չնախատեսված ծախսեր - 3645000 (երեք միլիոն վեց հարյուր քառասունհինգ հազար) դրամ: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրն անհրաժեշտության դեպքում կարող է համագործակցել տարբեր շահագրգիռ պետական կառավարման, տեղական ինքնակառավարման և այլ պետական և մասնավոր մարմինների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագիրը կմշակի իր գործունեության արդյունավետության գնահատման ներքին հսկողության համակարգ և պարբերաբար աուդիտի կենթարկվի անկախ աուդիտորի կողմից: ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը՝ հաշվետվությունների տեսքով: |

Կազմեց՝ Արամ Նարիմանյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-732-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1229-Ա ԵՎ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-016-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 22-ի N 01.1/14-2/15260-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 23-ի N 06/3-8/32070-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության 2017 թվականի օգոստոսի 14-ի N Ֆ/1 056 գրությունը,* ***որոշում է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-1229-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին կետում «1,374,047,370 դրամ» բառերը փոխարինել «1,440,966,650 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի N Մ-1229-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին («Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)» N Մ-016-Ա որոշման 1-ին կետի երկրորդ պարբերությունում «651,047,365 դրամ» բառերը փոխարինել «714,207,702 դրամ» բառերով:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

11/11.1

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության ... Հայրապետյանի կողմից
«14» օգոստոսի 2017 թ.

«Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում»

# Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Արմավիր մարզի տարածաշրջանում մանկապատանեկան ֆուտբոլի զարգացման և մասսայականացման նպատակով Վաղարշապատ քաղաքային համայնքի, Մարգարա խճուղի թիվ 12 հասցեում ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Եվրոպայի ֆուտբոլի ասոցիացիաների միություն – (UEFA-Շվեյցարիա, Նիոն) և Ֆուտբոլի ասոցիացիաների միջազգային ֆեդերացիա - (FIFA - Շվեյցարիա, Ցյուրիխ): |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915): |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ծրագիրը իրականացվում է Վաղարշապատ քաղաքային համայնքում, սպորտի բնագավառում: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 1,440,966,650 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միությունը (ՀՀ, քաղ. Երևան, Խանջյան 27, ՀՎՀՀ 02566915)՝ ի դեմս Վաղարշապատ քաղաքային համայնքի, Մարգարա խճուղի թիվ 12 հասցեում կառուցվող Ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է կատարել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 1. Մարզադպրոցի կառուցման ընդհանուր շինարարական, տարածքի բարեկարգման և կահավորման աշխատանքներ՝ 520,673,030 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>2. Կաթսայատան, ջեռուցման, օդափոխության և անվտանգության համակարգերի նախագծման, կառուցման ու սարքավորումների մոնտաժման աշխատանքներ՝ 35,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>3. Լողավազանի հարդարման և սարքավորումների մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 15,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>4. Ոռոգման համակարգերի նախագծման և կառուցման աշխատանքների իրականացում՝ 31,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը: |

| | | |
|---|---|---|
| | | 5. Խորքային հորի կառուցման, պոմպի. տեղադրմանան աշխատանքներ, պաշարի ջրամբարի շինարարական աշխատանքների իրականացում՝ 52,500,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>6. Մարզադպրոցի տարածքի ասֆալտապատման և բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 27,500,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>7. Խաղադաշտերի կառուցում՝ 146,293,620 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>8. Արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 12,000,000 դրամ արժողությամբ. նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը:<br>9. Շինարարական նյութերի, ներքին հարդարման պարագաների, արտաքին լուսավորության սարքավորումների, լուսադիոդային ցուցատախտակի, մարզագույքի, մարզասարքերի, կահավորանքի, խաղադաշտերի խնամքի սարքավորումների, լողավազանի սարքավորումների և ախտահանիչ միջոցների, խոտի սերմի և պարարտանյութերի, արհեստական խոտածածկերի, ռետինե գնդիկների, արհեստական խոտածածկի մարզագույքի, արհեստական խոտածածկի մշակման տեխնիկայի, կվարցային ավազի ներմուծում՝ 601,000,000 դրամ արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2016 թվականի դեկտեմբերի 12-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 30-ը: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայու-թյունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | - մարզադպրոցի կառուցման շինարարական և ներքին հարդարման աշխատանքների իրականացում՝ 290,080,750 դրամ,<br>- ֆիլտրացիոն սարքավորումների տարածքի և պոմպակայանի շինարարական աշխատանքների իրականացում՝ 23,620,050 դրամ,<br>- պաշարի ջրամբարի շինարարական աշխատանքների իրականացում՝ 38,500,000 դրամ,<br>- տրիբունայի շինարարական աշխատանքների իրականացում՝ 17,968,900 դրամ,<br>- լողավազանի և օժանդակ կառույցի շինարարական աշխատանքների իրականացում՝ 53,423,010 դրամ,<br>- լողավազանի հարդարման և սարքավորումների մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 15,000,000 դրամ,<br>- տարածքի էլեկտրամատակարարման և արտաքին լուսավորության համակարգերի կառուցման աշխատանքների իրականացում՝ 7,268,520 դրամ,<br>- կաթսայատան, ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագծման, կառուցման ու սարքավորումների մոնտաժման աշխատանքների իրականացում՝ 25,000,000 դրամ,<br>- անվտանգության համակարգերի կառուցման աշխատանքների իրականացում՝ 10,000,000 դրամ,<br>- պահակատան շինարարության, բարեկարգման, ցանկապատման և պարսպապատման աշխատանքների իրականացում՝ 118,451,670 դրամ,<br>- մարզադպրոցի կահավորման աշխատանքների իրականացում՝ 9,860,130 դրամ,<br>- մարզադպրոցի տարածքի ասֆալտապատման աշխատանքների իրականացում՝ 15,000,000 դրամ,<br>- մարզադպրոցի տարածքի բարեկարգման աշխատանքների իրականացում՝ 12,500,000 դրամ,<br>- ոռոգման համակարգերի նախագծման և կառուցման աշխատանքների իրականացում՝ 31,000,000 դրամ, |



| | | |
|---|---|---|
| | | - խորքային հորի կառուցման և պոմպի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 14,000,000 դրամ,<br>- երեք ստանդարտ չափսերի խաղադաշտերի շինարարական աշխատնքների իրականացում՝ 97,960,720 դրամ,<br>- մեկ արհեստական խոտածածկով խաղադաշտի հիմք դրենաժային համակարգի կառուցում՝ 48,332,900 դրամ,<br>- արհեստական խոտածածկի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 20,000 եվրոյին համարժեք՝ 12,000,000 դրամ,<br>Շինանյութի և ներքին հարդարման պարագաների՝ 100,000,000 դրամ, արտաքին լուսավորության սարքավորումների՝ 150,000,000 դրամ, լուսադիոդային ցուցատախտակի՝ 62,000,000 դրամ, կահավորանքի՝ 50,000,000 դրամ, մարզագույքի՝ 8,000,000 դրամ, մարզասարքերի՝ 5,000,000 դրամ, խաղադաշտի խնամքի սարքավորումների՝ 25,000,000 դրամ, լողավազանի սարքավորումների և ախտահանիչ միջոցների՝ 40,000,000 դրամ, խոտի սերմի և պարարտանյութերի՝ 40,000,000 դրամ ներմուծում:<br>- խաղադաշտի արհեստական խոտածածկի (տեղադրման նյութերով և պարագաներով)՝ 116,000 եվրոյին համարժեք՝ 69,600,000 դրամ, արհեստական խոտածածկի մշակման տեխնիկայի՝ 11,000 եվրոյին համարժեք՝ 6,600,000 դրամ, մարզագույքի՝ 6,000 եվրոյին համարժեք՝ 3,600,000 դրամ ներմուծում. փոխադրման ծախսերը կկազմեն 12,000 եվրոյին համարժեք՝ 7,200,000 դրամ,<br>- արհեստական խոտածածկի ռետինե գնդիկների՝ 20,000 եվրոյին համարժեք՝ 12,000,000 դրամ ներմուծում. փոխադրման ծախսերը կկազմեն՝ 30,000 եվրոյին համարժեք՝ 18,000,000 դրամ,<br>- կվարցային ավազի՝ 8,000 ԱՄՆ-ի դոլարին համարժեք՝ 4,000,000 դրամ ներմուծում. ներառյալ փոխադրման ծախսերը: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է համագործակցություն Վաղարշապատի քաղաքապետարանի հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունը կիրականացվի ՖԻՖԱ-ի (ֆինանսական աուդիտ) և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգող հանձնաժողովի հետ |

Կազմեց՝ ֆինանսական բաժնի պետ Գևորգ Պապիկյան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-733-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 2-Ի N Մ-486-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(«Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի հուլիսի 6-ի N 01.1/14-2/12172-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի օգոստոսի 7-ի N 06/3-8/28726-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 2-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի հուլիսի 19-ի N Մ-648-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքների մասին («Յանգ լայֆ» ոչ առևտրային կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ՝ «Քրոսրոադս» միջազգային բարեգործական հիմնադրամի հետ համատեղ)» N Մ-486-Ա որոշման 1-ին կետում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) 2-րդ ենթակետում «1,200,000» թիվը փոխարինել «3,000,000» թվով.

2) 3-րդ ենթակետում «1,200,000» թիվը փոխարինել «5,000,000» թվով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-734-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 6-ի N 01.1/14-2/16169-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 06/3-8/34614-17 և Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 6-ի N ՆՁ/22.2/11155-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «AmeriCares» հիմնադրամի կողմից ԱՄՆ-ի «Հայաստան-Արցախ» հիմնադրամի միջոցով, որպես օժանդակություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված դեղերի (մեկ տեղ (31 արկղ), 95.3 կգ ընդհանուր քաշով, 164,311.28 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 655.40 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման և անհատույց բաշխման (ցանկը կցվում է) ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Մարդասիրական օգնության հանրապետական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռի բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ — Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՀ 092

**«ՀԱՅԱՍՏԱՆ-ԱՐՑԱԽ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՄԻՋՈՑՈՎ ՈՐՊԵՍ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅՈՒՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ԲԱՇԽՄԱՆ ՑԱՆԿ**

| Հ/Հ | Դոնոր | Նկարագրություն | Ստացող | Կոդ | Արկղ | Քաշ (lbs) | Արժեք (ԱՄՆ դոլար) |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Ալթունյան Լևոն – ՀՀ առողջապահության նախարարություն | Air 092-01 | 30 | 186 | 158,311.28 |
| 2. | Հայաստան Արցախ հիմնադրամ (AmeriCares) | Դեղեր | Մինասյան Ա.- «Սուրբ Գրիգոր Լուսավորիչ» բժշկական կենտրոն | Air 092-02 | 1 | 2 | 6,000.00 |
| | | | | **Ընդամենը** | 31 | 188 | 164,311.28 |
| | | | | **Փոխադրման ծախսեր** | | | 655.40 |
| | | | | **Ընդամենը** | | | 164,966.68 |

Ձ-11/3.4

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-735-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ՄԻՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 6-ի N 01.1/14-2/16170-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 06/3-8/34304-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել Հայկական բարեգործական ընդհանուր միության (ԱՄՆ) կողմից, որպես նվիրատվություն՝ Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարության համար, Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչության հասցեով ուղարկված «Քինդլ» ընթերցիչների և դրանց պատյանների (26 տեղ, 425.2 կգ ընդհանուր քաշով, 75,690.44 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 3,840.74 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» ՄՎ) ներմուծման ծրագիրը:

2. Հայկական բարեգործական ընդհանուր միության Հայաստանի ներկայացուցչությանը՝ բեռի համապատասխան ձևակերպումները և բաշխումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության պաշտպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-736-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1229-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 6-ի N 01.1/14-2/16119-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 06/3-8/34302-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված արհեստական խոտածածկը (տեղադրման նյութերով և պարագաներով՝ 123 տեղ, 9,100 կգ ընդհանուր քաշով, 45,205.50 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,500 եվրո, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-1229-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-737-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 23-Ի N Մ-1229-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 6-ի N 01.1/14-2/16118-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 06/3-8/34303-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված կվարցային ավազը (5 տեղ, 125,000 կգ ընդհանուր քաշով, 6,875 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի դեկտեմբերի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Վաղարշապատի ֆուտբոլի մանկապատանեկան մարզադպրոցի կառուցում և կահավորում» ծրագրի մասին» N Մ-1229-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-738-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 23-Ի N Մ-549-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1

**(«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միություն)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 6-ի N 01.1/14-2/16121-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 06/3-8/34301-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից ձեռք բերված արհեստական խոտածածկը (16 տեղ, 13,480 կգ ընդհանուր քաշով, 46,771.72 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 5,500 եվրո, «Արարատյան» ՄՎ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 23-ի «Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» իրավաբանական անձանց միության կողմից իրականացվող «Արմավիր քաղաքի «Հոբելյանական» մարզադաշտի վերակառուցում» ծրագրի մասին» N Մ-549-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-739-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1435-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 31-ի N 01.1/14-2/15907-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբեր 5-ի N 06/3-8/34126-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ  է.*

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված ամրանները (95,300 կգ ընդհանուր քաշով, 48,105.23 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 3,102,010 դրամ, «ԵՏՄ» բեռ) ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Գյումրի քաղաքի հին թատրոնի շենքի ու հարակից տարածքի վերակառուցման, վերանորոգման և բարեկարգման» ծրագրի մասին» N Մ-1435-Ա որոշմամբ հաստատված (2017 թվականի օգոստոսի 11-ի N Մ-700-Ա որոշման խմբագրությամբ) ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ          Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-740-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 01.1/14-2/16086-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 06/3-8/34129-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված տպագրության սարքը՝ իր պիտույքներով (մեկ տեղ, 297 կգ ընդհանուր քաշով, 6,454.45 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 125 ԱՄՆ-ի դոլար ու 260,715 դրամ) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-741-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-018-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ N 1**
**(«Սիմոնյան» կրթական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 6-ի N 01.1/14-2/16123-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 06/3-8/34130-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01245672) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սիմոնյան» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Թումո» ստեղծարար տեխնոլոգիաների կենտրոններ» ծրագրի մասին» N Մ-018-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Զիգզագ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02500164) 2017 թվականի հուլիսի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 4 հեռուստացույցի ձեռքբերում՝ 1,192,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Դեկորա-գրուպ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02583611) 2017 թվականի օգոստոսի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 3 ներքնակի ձեռքբերում՝ 69,360 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Հոմբեյս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00111086) 2017 թվականի օգոստոսի 25-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է կենցաղային կահավորանքի ձեռքբերում՝ 283,625 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.



4) «Սոֆադ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00019746) 2017 թվականի օգոստոսի 29-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 1,000 տուփ անձեռոցիկի ձեռքբերում՝ 580,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-742-Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2012 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 24-Ի N Մ-126-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1

**(«Տաշիր» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017.թվականի սեպտեմբերի 7-ի N 01.1/14-2/16237-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 06/3-8/34586-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 07203481) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2012 թվականի փետրվարի 24-ի «Տաշիր» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի վեհարանի հանդիսությունների դահլիճի շենքի արտաքին և ներքին հարդարման աշխատանքների իրականացում» ծրագրի մասին» N Մ-126-Ա որոշմամբ հաստատված (2014 թվականի փետրվարի 14-ի N Մ-073-Ա, դեկտեմբերի 26-ի N Մ-1355-Ա, 2015 թվականի փետրվարի 20-ի N Մ-143-Ա, հուլիսի 24-ի N Մ-758-Ա, 2016 թվականի փետրվարի 19-ի N Մ-111-Ա, հուլիսի 22-ի N Մ-671-Ա և դեկտեմբերի 23-ի N Մ-1224-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Նիկոլ Դուման» արտադրական կոոպերատիվի հետ (ՀՎՀՀ՝ 02208258) 2017 թվականի օգոստոսի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լուսատուների մատակարարում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**8 սեպտեմբերի 2017 թվականի Ν Մ - 743 - Ա**
**քաղ. Երևան**

**«ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՀԵՌՈՒՍՏԱՄԱՐԱԹՈՆ-2017» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 10-ի N 01.1/14-2/14536-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի օգոստոսի 14-ի N 02/14/14376-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 10-ի N 06/3-8/29757-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 68,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Հեռուստամարաթոն-2017» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման նպատակով «Հայաստան» համահայկական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 02507456) կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՇԱՐՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01543148) 2017 թվականի օգոստոսի 2-ին կնքված N Ծ-Մ-01/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տեղեկատվական ու գովազդային տեսահոլովակների և գրաֆիկական ձևավորումների պատրաստում ու դիզայներական ձևակերպում՝ 18,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության սփյուռքի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Մ. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Յայաստան» համահայկական
հիմնադրամի գործադիր տնօրեն

Արա Վարդանյան
«04» օգոստոսի 2017թ.

# «Հեռուստամարաթոն – 2017»
# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նախապատրաստել հիմնադրամի ներքական բարեգործական դրամահավաքի՝ «Հեռուստամարաթոն-2017»-ի պատշաճ անցկացումը |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օրենքով սահմանված կարգով օգտվել հարկային արտոնություններից |
| 3. | Բարեգործը | Անհատ բարերարներ /ֆիզիկական և իրավաբանական անձիք/ |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Հայաստան» համահայկական հիմնադրամ<br>(ՀՀ, քաղ. Երեւան, Կառավարական տուն N 3, ՀՎՀՀ՝ 02507456) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ և ԱՀ, սոցիալ-տնտեսական բնագավառ |
| 6. | Ծրագրի բյուջեն | Բյուջեն կազմում է 68.000.000,00 դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ և ԱՀ ազգաբնակչությունը |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | Ծրագիրը նախատեսվում է իրականացնել 2017թ օգոստոսի 02-ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 31-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական | 2017թ օգոստոսի 02-ից մինչեւ 2017թ. դեկտեմբերի 31-ը «ՇԱՐՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից. |



| | | |
|---|---|---|
| | միջոցների ծավալը | 1 հատ տեղեկատվական ֆիլմի (մինչև 2 րոպե տևողությամբ),<br><br>1 հատ տեղեկատվական տեսահոլովակի (25 վրկ. տևողությամբ),<br><br>2 հատ տեղեկատվական տեսահոլովակների (60 վրկ. տևողությամբ),<br><br>5 ֆիլմերից բաղկացած տեսաշարի (յուրաքանչյուրը մինչև 3 րոպե) պատրաստում,<br><br>«Հեռուստամարաթոն-2017»-ի ընդհանուր կոնցեպցիայի (դիզայներական ձևավորման) մշակում և տեսանյութերի գրաֆիկայի և համակարգչային մոնտաժի իրականացում՝ 18.000.000,00 դրամ արժողությամբ,<br><br>ինչպես նաև հաշվետու բնույթի, գովազդային, տեղեկատվական և քարոզչական նյութերի նկարահանում, տպագրություն, տարածում (առաքում), տեղադրում, ցուցադրում և այլ գործարքներ բարեգործական հեռուստամարաթոնին նվիրված միջոցառումների անցկացման շրջանակներում 50.000.000,00 ՀՀ դրամ մոտավոր արժեքով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | «ՇԱՐՄ ՀՈԼԴԻՆԳ» ՍՊԸ-ի կողմից.<br><br>1 հատ տեղեկատվական ֆիլմի (մինչև 2 րոպե տևողությամբ) պատրաստում՝ 3.960.000,00 դրամ,<br><br>1 հատ տեղեկատվական տեսահոլովակի (25 վրկ. տևողությամբ) պատրաստում՝ 1.200.000,00 դրամ,<br>2 հատ տեղեկատվական տեսահոլովակների (60 վրկ. տևողությամբ) պատրաստում՝ 3.440.000,00 դրամ, |

| | | |
|---|---|---|
| | | տեսանյութերի գրաֆիկայի և համակարգչային մոնտաժի իրականացում՝ 2.800.000,00 դրամ,<br><br>5 ֆիլմերից բաղկացած տեսաշարի (յուրաքանչյուրը մինչև 3 րոպե) պատրաստում, 5.500.000,00 դրամ,<br><br>«Հեռուստամարաթոն-2017»-ի ընդհանուր կոնցեպցիայի (դիզայներական ձևավորման) մշակում՝ 1.100.000,00 դրամ,<br><br>ընդամենը՝ 18.000.000,00 դրամ առանց ԱԱՀ-ի,<br><br>ինչպես նաև հաշվետու բնույթի, գովազդային, տեղեկատվական և քարոզչական նյութերի նկարահանում, տպագրություն, տարածում (առաքում), տեղադրում, ցուցադրում և այլ գործարքներ բարեգործական հեռուստամարաթոնին նվիրված միջոցառումների անցկացման շրջանակներում 50.000.000,00 ՀՀ դրամ մոտավոր արժեքով: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Նախատեսվում է համագործակցություն համապատասխան մարզպետարանների |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու է ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից (եռամսյակային եւ ամփոփ հաշվետվություններ): |

Ներկայացրեց գործադիր
տնօրենի խորհրդական՝

Արմինա Դարբինյանը

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 744 -Ա**
**քաղ. Երևան**

**«ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՇՈՒՇԻ ՔԱՂԱՔԻ ԳՈՀԱՐ ԱՂԱ ՎԵՐԻՆ (ՋՈՒՄԱ) ՄԶԿԻԹԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 21-ի N 01.1/14-2/15217-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի օգոստոսի 23-ի N 04/14/4957-17, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարության 2017 թվականի օգոստոսի 18-ի N 01/3.1/4887-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 23-ի N 06/3-8/32065-17 եզրակացությունները,* ***որոշում է.***

1. Բարեգործական որակել «Արևելյան պատմական ժառանգության վերածնունդ» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մելիք Ադամյան 2/2, ՀՎՀՀ՝ 02631822) իրականացվող՝ 558,000,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Շուշի քաղաքի աղա վերին (Ջումա) մզկիթի վերանորոգման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. «Արևելյան պատմական ժառանգության վերածնունդ» բարեգործական հիմնադրամին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել հաշվետվություն այդ եռամսյակի ընթացքում նշված ծրագրի շրջանակներում հիմնադրամի կողմից, ինչպես նաև հիմնադրամին մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների մասին, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության մշակույթի նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ
Բարեգործական հիմնադրամի
Հոգաբարձուների Խորհրդի թիվ 07-17 որոշմամբ

Տնօրեն՝ Է[illegible]

# ԾՐԱԳԻՐ

## Շուշի քաղաքի Գոհար Աղա վերին (Ջումա) մզկիթի վերականգնման աշխատանքներ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է իրականացնել Արցախում գտնվող Շուշի քաղաքի Գոհար Աղա վերին (Ջումա) մզկիթի վերականգման, շրջակա միջավայրի բարելավման աշխատանքները: Ծրագրի շրջանակը ներառում է տարածաշրջանի պատմական ժառանգության պահպանումը և պատշաճ ներկայացումը, Շուշի հին քաղաքի պատմական տեսքի և ճարտարապետության պահպանումը, նոր զբոսաշրջային կենտրոնի ձևավորումը Շուշիի քարտեզի վրա: Այս սոցիալ-ներդրումային նախագծի իրականացումը կարող է խթան հանդիսանալ Շուշի հին քաղաքի, ճարտարապետական տեսքն աստիճանաբար վերականգնելու համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | Հանգանակության մասնակիցներ ֆիզիկական անձիք, ոչ առևտրային և բարեգործական կազմակերպություններ, նվիրատվություն և նվիրաբերություններ կատարողներ՝ մասնավորապես ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ Բարեգործական Հիմնադրամը, վերջինիս հիմնադիրը՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ Բարեգործական հիմնադրամը (ՀՎՀՀ՝ 02628286) |
| 4. | Ծրագիրը կատարողը | ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ Բարեգործական Հիմնադրամ<br>Գտնվելու վայր՝ ՀՀ, ք. Երևան, Մելիք Ադամյան 2/2,<br>ՀՎՀՀ՝ 02631822,<br>պետական ռեգիստրի վկայական՝ 03Ա981127,<br>գրանցված՝ 10.10.2014թ. |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետություն, ք. Շուշի<br>Մշակութային ժառանգության պահպանում, վերանորոգում, ճարտարապետություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի իրականացման բյուջեն կկազմի **558,000,000 ՀՀ դրամ** |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը և բնակչությունը, Հայաստանի Հանրապետությունը և բնակչությունը, ՀՀ և ԼՂՀ ժամանող զբոսաշրջիկները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 օգոստոս 2017թ. – 30 ապրիլ 2020թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Գոհար Աղա վերին (Ջուղա) մզկիթի վերականգման աշխատանքների ծրագրի գնահատված բյուջե, որը ներկայացված է 3 տարվա համար: |

| Անվանումը | Գնահատված ծախսեր, հազ. ՀՀ դրամ, Օգոստոսի 1,2017 -30 ապրիլ 2020 թ. |
|---|---|
| *1. Մզկիթի ամրապնդում, վերանորոգման, նախապատրաստման, նախագծային և շինարարական աշխատանքներ և նյութեր* | *298,320* |
| *2. Մադրասա շենքի ամրապնդում, վերանորոգման, նախապատրաստման, նախագծային, շինարարական աշխատանքներ և այլ աշխատանքներ: Գույքի և ապրանքանյութական արժեքների ձեռք բերում Մադրասայի շենքի համար,* | *93,011* |
| *3. Ճարտարապետական և ինժեներական աշխատանքներ,* | *20,134* |
| *4. Վերահսկողության և այլ նմանատիպ աշխատանքներ,* | *21,049* |
| *5. Մասնագիտական, իրավաբանական, թարգմանչական, աուդիտորական, լրատվական, ճարտարապետաինժիներական, պատմամշակութային ժառանգության, պահպանման և այլ խորհրդատվական ծառայություններ,* | *10,000* |
| *6. Գույքի և ապրանքանյութական արժեքների, շինանյութերի, մետաղական կոնստրուկցիաների և այլ ապրանքների ձեռք բերում,* | *40,230* |
| *7. Արևելագետների և այլ մասնագետների (փորձագետների) խորհրդատվություն,* | *1,546* |
| *8. Բարեկարգման աշխատանքներ,* | *28,000* |

| | | | |
|---|---|---|---|
| | | *9. Աշխատավարձի և ֆիզիկական անձանց կողմից ծառայությունների մատուցման գծով ծախսեր, այդ թվում վարչական աշխատակազմ և քաղ իրավական հիմունքներով ծառայությունների մատուցման աշխատակիցներ,* | *25,960* |
| | | *10. Տարածքների (ապրանքների պահեստավորման համար), դահլիճների(միջոցառումների կազմակերպման համար) , գրասենյակների (աշխատակազմի համար), բնակարանների վարձակալություն (ոչ տեղացի աշխատակիցների կամ քաղ.իրավական ծառայություններ մատուցողների գիշերակացների համար), գրասենյակային գույքի ապահովում, կոմունալ վճարներ և գրասենյակային ծախսեր,* | *6,000* |
| | | *11. Գործուղման ծախսեր՝ հյուրանոցային ծառայություններ, տրանսպորտային ծառայություններ, ավիատոմսեր և օրապահիկներ, որը նախատեսված է կազմակերպչական աշխատակազմի, ծրագրի ղեկավար անձնակազմի համար, թվով մոտ 3 աշխատակիցների միջազգային և տեղական գործուղումներ (ծրագրի արտասահմանյան գրասենյակներ, հանդիպումներ արտասահմանյան գործընկերների հետ, ծրագրի աշխատանքների կազմակերպման և ղեկավարման, փորձի փոխանակման նպատակով),* | *8,750* |
| | | *12. Տպագրական և դիզայներական ծառայություններ, այդ թվում՝ բուկլետների, այցեքարտերի, տոմսերի, հրավիրատոմսերի, հուշանվերների և այլ փաստաթղթերի գնում/տպագրություն և ձևավորում, WEB կայքի մշակում,* | *2,000* |
| | | *13. Լոգիստիկայի, տրանսպորտային, անվտանգության և պահնորդային ծառայություններ, ինչպես նաև համապատասխան սարքավորումների (անվտանգության սարքեր, սարքավորումների տեղափոխման հարմարանքներ) ձեռք բերման հետ կապված ծախսեր:* | *3,000* |
| | | ***Ընդամենը՝*** | ***558,000*** |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու | Մզկիթի, Մաղրասսա շենքի ամրապնդման, վերանորոգման, նախապատրաստման, նախագծային, շինարարական աշխատանքներ և նյութեր, քարենորոգման աշխատանքեր, նաև գույքի և ապրանքանյութական արժեքների ձեռք բերում , ընդամենը՝ 459,561,000 ՀՀ դրամի չափով: | |



| | | |
|---|---|---|
| | ծառայությունների համառոտ նկարագիրը | Ճարտարապետական, ինժեներական աշխատանքներ, վերահսկողության, մասնագիտական, իրավաբանական, թարգմանչական, աուդիտորական, լրատվական, ճարտարապետաինժիներական, պատմամշակութային ժառանգության, պահպանման և այլ խորհրդատվական ծառայություններ՝ ընդհանուր 52,729,000 դրամի չափով, այդ թվում նախատեսվում է նաև ԵՏՄ-ից, եվրոպական և այլ երկրների արտադրության սարքավորումների և այլ անհրաժեշտ ապրանքանյութական արժեքների մշտական և ժամանակավոր ներմուծման հետ կապված ծախսեր մոտավորապես 22 մլն. Հհ դրամի չափով:<br>Լոգիստիկայի, տրանսպորտային, անվտանգության և պահնորդային ծառայություններ, ինչպես նաև համապատասխան սարքավորումների (անվտանգության սարքեր, սարքավորումների տեղափոխման հարմարանքներ) ձեռք բերման հետ կապված ծախսեր, 3 մլն ՀՀ դրամի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | **24,220 հազ. ՀՀ դրամ** - վարչական աշխատակիցների աշխատավարձը,<br>**8,750 հազ. ՀՀ դրամ** - գործուղման ծախսեր,<br>**8,000 հազ. ՀՀ դրամ** - ծրագրի իրականացման հետ կապված գրասենյակային, վարձակալական,կոմունալ,տպագրական, դիզայներական, վեբ կայքի ձևավորման և վարչական այլ չկանխատեսված ծախսեր: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների հետ | Լեռնային Ղարաբաղի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետություն կառավարություն, Իրանական «Part Saman Jahan» ճարտարապետական ընկերություն, Հուշարձանների և տեսարժան վայրերի պահպանման միջազգային խորհրդի (ICOMOS), Հայաստանի ազգային կոմիտե (ԻԿՕՄՕՍ-ՀԱՅԱՍՏԱՆ), ֆիզիկական, իրավաբանական անձինք, պետական և տեղական ինքնակառավարման մարմիններ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | ԱՐԵՎԵԼՅԱՆ ՊԱՏՄԱԿԱՆ ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ Բարեգործական Հիմնադրամի հոգաբարձուների խորհուրդն ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար ստացման միջոցով, ԼՂՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ հաշվետվությունների տեսքով, ԼՂՀ մշակույթի նախարարություն՝ ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ տեղեկատվության պարբերաբար ստացման միջոցով, ինչպես նաև սահմանված կարգով հաշվետվությունների ներկայացում ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

**Տնօրեն՝ Էդգար Մանուկյան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 745 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ՏՊԱԳՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀՈՎԱՆԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԾՐԱԳՐԻ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 29-ի N 01.1/14-2/15639-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի օգոստոսի 29-ի N 02/14/15237-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի օգոստոսի 25-ի ԱԳ/ԱնՄ-2-1/8854-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 30-ի N 06/3-8/33234-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 979,167 դրամ ընդհանուր արժողությամբ «Տպագրական աշխատանքներ երեխաների հովանավորության ծրագրի համար» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Առողիկ» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 00835755) հետ 2017 թվականի օգոստոսի 7-ին կնքված N WVA/BC/PRINTING/SOD/03/FY17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է տպագրական աշխատանքների իրականացում՝ 979,167 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

| | | |
|---|---|---|
| | | մասնագետների կողմից:<br>«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը վերահսկվում է միջազգային աուդիտի, ինչպես նաև հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի Հովանավորության բաժնի ղեկավար

Մադլեն Մուրադյան

02528755
ՎՎ ՀԱՅԱUSԱՆՅԱՆ
ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN
BRANCH

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 746 -Ա**
**քաղ. Երևան**

**«ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ՓՈԽԱՐԻՆԵՆՔ ՍԻՐՈՎ» ԵՐԵԽԱՆԵՐԻ ՀԱՆԴԵՊ ԲՌՆՈՒԹՅԱՆ ԴԵՄ ՊԱՅՔԱՐԻ ՀԱՆՐԱՅԻՆ ԱՐՇԱՎԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ՄԵԴԻԱ ՆՅՈՒԹԵՐԻ ՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 29-ի N 01.1/14-2/15645-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի օգոստոսի 31-ի N 02/14/15383-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի օգոստոսի 25-ի ԱԳ/ԱնՄ-2-1/8852-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի օգոստոսի 31-ի N 03/07-1/11496-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 06/3-8/33681-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Բարեգործական որակել «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Ռոմանոս Մելիքյան 1, ՀՎՀՀ՝ 02528755) իրականացվող՝ 5,420,000 դրամ ընդհանուր արժողությամբ «Բռնությունը փոխարինենք սիրով» երեխաների հանդեպ բռնության դեմ պայքարի հանրային արշավի շրջանակներում մեդիա նյութերի պատրաստման աշխատանքներ» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից կնքված՝ ստորև նշված քառակողմ պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պերսոնա գրատա» ՍՊԸ-ի (ՀՎՀՀ՝ 02701917) հետ 2017 թվականի օգոստոսի 11-ին կնքված N WVA/ADV/2017/06/0096/FY17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մեդիա նյութերի պատրաստում՝ 5,420,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

3. «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն ծրագրի կատարման մասին:

4. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ»
միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի Ծրագրի տնօրենի
Ժիրայր Էդիլյան

11 սեպտեմբերի 2017թ.

**«Բռնությունը փոխարինենք սիրով» երեխաների հանդեպ բռնության դեմ պայքարի հանրային արշավի շրջանակում մեդիա նյութերի պատրաստման աշխատանքներ**

**Ծ Ր Ա Գ Ի Ր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | 2017թ. սեպտեմբերին Հայաստանում գործող մի շարք հասարակական կազմակերպություններ, միանալով երեխաների հանդեպ բռնության վերացմանն ուղղված համաշխարհային արշավին, կազդարարեն Երեխաների հանդեպ բռնության վերացմանն ուղղված հայաստանյան արշավի մեկնարկը, որը նպատակն է նվազեցնել Հայաստանում ապրող երեխաների հանդեպ կիրառվող ֆիզիկական և հոգեբանական բռնությունը՝ ստեղծելով բարենպաստ միջավայր երեխաների լիարժեք և ներդաշնակ զարգացման համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Օգտվել Հայաստանի Հանրապետության՝ հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի աջակցող գրասենյակ<br>Հասցե՝ 34834 Weyerhaeuser Way So. Federal Way, WA 98001 |
| 4. | Ծրագիրը կատարողը | 1. «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղ<br>*Հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Ռ. Մելիքյան փ. 1, ՀՎՀՀ 02528755, հեռախոս՝+374 10 749146*<br>2. «Սեյվ Դը Չիլդրեն Ինթերնեշնլ» Հայաստանյան Ներկայացուցչություն<br>*Հասցե՝ Երևան, Ազատության պող., 27 շենք, 3-րդ հարկ, Հեռ. +374-10-201014*<br>3. «ՍՕՍ Մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամ<br>*Հասցե՝ ՀՀ ք. Երևան Եկմալյան 1, բն. 31, ՀՎՀՀ՝ 03517269, Հեռ՝ (37410) 53-33-52, 060 53-33-55* |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Իրականացման վայրը՝ ՀՀ, ք. Երևան<br>Բնագավառը՝ երեխաների պաշտպանություն |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն կազմում է 5,420,000 (հինգ միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Բարեգործություն ստացող են հանդիսանում Հայաստանի Հանրապետության 0-18 տարեկան երեխաները: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 09 օգոստոսի 2017թ. – 15 սեպտեմբերի 2017թ. |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Նպատակ ունենալով նպաստել Հայաստանի Հանրապետությունում երեխայի հանդեպ բռնության կանխարգելմանը, վերացմանը և բռնության ենթարկված երեխայի համակողմանի վերականգնմանը, 2017 թվականի փետրվարին Վորլդ Վիժն Հայաստան, ՅՈՒՆԻՍԵՖ, «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլի» հայաստանյան ներկայացուցչություն, ՍՕՍ մանկական գյուղեր-Հայաստան, Հայաստանի մանուկներ հիմնադրամ, Քաղաքացիական հասարակության ինստիտուտ, Երեխաների պաշտպանության ցանց, «Ընտանիք և համայնք» ՀԿ, Հայ օգնության ֆոնդի «Երեխաների աջակցության կենտրոն», [illegible] իրավունքների պաշտպանի աշխատակազմ, «Մեդիամաքս» գործակալություն, «Լրատվական ռադիո» [illegible] ընկերություն և Pan Photo կազմակերպությունները միավորեցին իրենց ջանքերը [illegible] «Բռնությունը փոխարինենք սիրով» երեխաների հանդեպ բռնության դեմ պայքարի հնգամյա հանրային [illegible] արշավի հայաստանյան նախաձեռնությունն է: |
| | | 2 |
| | | Հնգամյա հանրային արշավ է, որը մեկնարկել է 2017թ. և կիրականացվի մինչև 2022թ.:<br>Հանրային արշավի գործողությունների իրականացման աշխարհագրությունը ներառում է Հայաստանի Հանրապետության ողջ տարածքը:<br>Քարոզարշավին մասնակից կազմակերպությունները նպատակ են հետապնդում բարձրացնել հանրության տեղեկացվածությունը երեխաների հանդեպ բռնության Հայաստանում առկա իրավիճակի մասին, հանրությանը և պատկան մարմինների ուշադրությունը հրավիրել խնդրի հրատապությանը և հեռահար վտանգներին:<br><br>2015թ. Վորլդ Վիժն Հայաստանի կողմից անցկացված Երեխաների պաշտպանության ոլորտում տիրող իրավիճակի նախնական գնահատման արդյունքում վեր են հանվել մի շարք մտահոգիչ ցուցանիշներ, որոնք խոսում են Հայաստանում ապրող երեխաների հանդեպ ֆիզիկական և հոգեբանական բռնության մասին:<br>• Ծնողների 74.7%-ը վերջին մեկ ամսվա ընթացքում որպես պատժի ձև երեխաների նկատմամբ կիրառել է ֆիզիկական կամ հոգեբանական բռնություն:<br>• 39.7%-ը կիրառել է ֆիզիկական բռնություն:<br>• Նույն ծնողների 67.4%-ը կարծում է, որ ֆիզիկական բռնության կիրառումը դաստիարակության արդյունավետ մեթոդ չէ:<br>• Ծնողների 8%-ը կարծում է, որ ֆիզիկական պատիժը դաստիարակության արդյունավետ միջոց է:<br>• Քաղաքաբնակ երեխաները (72.3%) ավելի հաճախ են ենթարկվում ֆիզիկական բռնության, քան գյուղաբնակ երեխաները (67.7%):<br><br>2017թ օգոստոսի 29-ին հրապարակված Հայաստանի ժողովրդագրության և առողջության հարցերի հետազոտության համաձայն (2015-16 թթ.)՝ 1-14 տարեկան տասը երեխայից յոթը հետազոտությանը նախորդող 30 օրերի ընթացքում ենթարկվել է հոգեբանական կամ ֆիզիկական որևէ պատժի: Երեխաների 65 տոկոսը ենթարկվել է հոգեբանական ագրեսիայի, իսկ 38 տոկոսը՝ ֆիզիկական պատժի որևէ տեսակի: Բռնի մեթոդները գրեթե հավասարապես կիրառվել են թե՛ աղջիկների (67 տոկոս), թե՛ տղաների (71 տոկոս) նկատմամբ: Սյունիքի և Վայոց ձորի մարզերի երեխաներն ամենաքիչն են ենթարկվել դաստիարակության որևէ բռնի մեթոդի (համապատասխանաբար 56 և 59 տոկոս), իսկ Արագածոտնի և Լոռու մարզերի տասը երեխաներից մոտ ութի նկատմամբ կիրառվել է որևէ բռնի մեթոդ:<br><br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 5,420,000 (հինգ՝միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | **Արվեստի ուղղության (art direction) մշակում**<br>«Երեխաների հանդեպ բռնության նվազեցում» քարոզարշավի համար մշակել արվեստի ուղղություն՝ խորհրդանիշով (symbol, not logo), ելնելով քարոզարշավի առջև դրված խնդիրներից: Սիմվոլը լայնորեն կիրառվելու է ինչպես տպագրական, այնպես էլ թվային նյութերում՝ տեսանյութեր, բաններներ, տեղեկատվական նյութեր, տեսանյութեր, սոցիալական մեդիաներ և այլն:<br>Տեսահոլովակ(ներ) և երաժշտական հոլովակի պատրաստում<br>0,5 – 1 րոպե տևողությամբ մինչև 3 հոլովակի պատրաստում, որոնք կպատմեն բռնության ենթարկված երեխաների զգացմունքների և ապրումների մասին: Հաղորդակցության թիմն առաջարկում է, որ տեսահոլովակի հերոսները |

| | | |
|---|---|---|
| | | լինեն հայտնի մարդիկ՝ դերասաններ, երգիչներ, հաղորդավարներ, ովքեր տեսահոլովակում կարող են վերարտադրել երեխաների ապրումները, իսկ հետագայում էլ պատրաստակամ կլինեն դառնալ քարոզարշավի ջատագովներն ու քարոզարշավի արժեքների կրողն ու տարածողը:<br><br>**Պաստառի դիզայն և տպագրություն**<br>3 տարբեր պաստառի դիզայն՝<br>1. Երեխաների հանդեպ բռնությունը դատապարտող,<br>2. Դրական դաստիարակության և ծնողավարության մոտեցումները խրախուսող,<br>3. Պատանիների շրջանում խաղաղարար ուղիները խրախուսող:<br><br>Պաստառները կարող են պատրաստվել նույն տրամադրությամբ և նույն հերոսների մասնակցությամբ, ինչպես և տեսանյութերը: Թիմը պատրաստ է նաև լսել և քննարկել հայտատուի այլ առաջարկներ:<br>Պաստառները պետք է համապատասխանեցվեն ինչպես լայնաֆորմատ տպագրության համար (չափսերը կորոշվեն առաջարկվող դիզայնին համապատասխան), այնպես էլ սոցիալական ցանցերում հեշտությամբ օգտագործելու համար, ներառյալ՝ Facebook Profile Picture չափսը, Facebook Cover չափս, Facebook նկարի փոստինգի չափս և Twitter Profile Picture չափսը և Twitter Header չափս (cover photo)<br><br>**Բուկլետի դիզայն և տպագրություն**<br>Քարոզարշավի հաղորդակցության թիմի տրամադրած նյութերի հիման վրա մշակել բուկլետ/բրոշյուր՝ առավելագույնը 8 էջ: Բուկլետը կպատմի ինչպես քարոզարշավի նպատակների, այնպես էլ երկրում առկա վիճակագրության մասին: Բուկլետի դիզայնը պետք է կրկնի պաստառի և տեսանյութերի դիզայնը/տրամադրությունը: Նախընտրելի չափսը՝ Ա5, սակայն թիմը պատրաստ է քննարկել նաև հայտատուի այլ առաջարկներ:<br><br>**Ինֆոգրաֆիկ տեսանյութ**<br>Քարոզարշավի հաղորդակցության թիմի տրամադրած տվյալների և վիճակագրական նյութերի հիման վրա պատրաստել ինֆոգրաֆիկ տեսանյութ առավելագույնը 40 վայրկյան տևողությամբ: Տեսանյութը պետք է դառնա քարոզարշավի այցեքարտը, քանի որ մատչելի/հասկանալի ինֆոգրաֆիկ պատկերների միջոցով (և միգուցե հեղինակի խոսքի օգնությամբ) կբացատրի, թե ինպիսին է այսօր իրավիճակը Հայաստանում երեխաների հանդեպ կիրառվող ֆիզիկական և հոգեբանական բռնության ոլորտում, և ինչ հետևանքներ կարող է այս իրավիճակը ունենալ նույն այդ երեխաների ապագա կյանքում: Տեսանյութը պետք է պիտանի լինի ինչպես հեռուստատեսային հեռարձակման, այնպես էլ սոցիալական ցանցում և վեբկայքերում լայնորեն տարածելու համար:<br><br>**Վեբկայքի պատրաստում**<br>5-ամյա քարոզարշավի համար նախատեսվում է ունենալ վեբկայք, որը կպատմի քարոզարշավի, մասնակից |



| | | |
|---|---|---|
| | | կազմակերպությունների մասին, ինչպես նաև կդառնա կրթական հեշտ հասանելի միջավայր՝ ինչպես երեխաների հետ աշխատող մասնագետների և ուսուցիչների, այնպես էլ ծնողների և երեխաների համար:<br><br>Ծրագիրը իրականացնելու համար «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղը մրցութային կարգով ընտրել է կազմակերպություն և ծառայությունների մատուցման պայմանագիր է կնքելու «ՊԵՐՄՈՆԱ ԳՐԱՏԱ» ՍՊԸ-ի, «Սեյվ դը չիլդրեն ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության, «ՍՕՍ Մանկական Գյուղեր» Հայկական Բարեգործական Հիմնադրամի հետ:<br>Ծրագրի ընդհանուր արժեքը կազմում է 5,420,000 (հինգ միլիոն չորս հարյուր քսան հազար) ՀՀ դրամ՝ առանց ԱԱՀ-ի: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսեր նախատեսված չեն: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Մեդիա նյութերի պատրաստումը հնգամյա արշավի մի մասն է: Արշավի ողջ ընթացքում գործընկերներն աշխատելու են ՀՀ արդարադատության, Աշխատանքի և սոցիալական հարցերի, Կրթության և գիտության նախարարությունների, մարզպետարանների, համայնքային իշխանությունների և այլ պետական գերատեսչությունների հետ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի իրականացման ընթացիկ վերահսկողությունն իրականացվում է «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի, «Սեյվ Դը Չիլդրեն Ինթերնեշնլ» Հայաստանյան ներկայացուցչության և «ՍՕՍ Մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամի կողմից: «Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղն, «Սեյվ Դը Չիլդրեն Ինթերնեշնլ» Հայաստանյան ներկայացուցչությունը և «ՍՕՍ Մանկական գյուղեր» հայկական բարեգործական հիմնադրամը վերահսկվում են միջազգային աուդիտի և Հայաստանի Հանրապետության հարկային մարմինների կողմից:<br>Ծրագրի ընթացքի և ավարտի մասին հաշվետվությունը կներկայացվի ՀՀ կառավարության Բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին: |

«Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության
հայաստանյան մասնաճյուղի շահերի պաշտպանության ծրագրի ղեկավար՝

Գայանե Վարդանյան

11/Ց.3

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 747 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՄՇՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 30-ի N 01.1/14-2/15807-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 4-ի N 06/3-8/33963-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ռուսաստանի Դաշնության քաղաքացի անհատ բարերար Հայկ Վլադիմիրի Բալյանի (անձնագիր՝ N 4615831330, տրված՝ 27.05.2015 թ.) կողմից Հայաստանի Հանրապետությունում Արցախի Հանրապետության մշտական ներկայացուցչության հասցեով ստացված բեռի (6 տեղ, 38 կգ ընդհանուր քաշով, 86,000 ռուսական ռուբլուն համարժեք դրամ արժողությամբ, բեռի ցանկը կցվում է, ԵՏՄ բեռ) ներմուծման ծրագիրը: Բեռը ստանալուց հետո անհատույց հանձնվելու է Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին:

2. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՑԱՆԿ**

**Մոսկվայից ՌԴ քաղաքացի Հայկ Բալյանի կողմից N42148734836 առ 16.08.2017թ. ավիաբեռնագրով ուղարկված բեռի**

| Հ/Հ | Ապրանքի անվանումը | Տեղերի թիվը | Քաշը (կգ) | Արժեքը /ռուբլի/ |
|---|---|---|---|---|
| 1 | Կարի մեքենա JUKI MO-55e/54e | 1 | 8 | 20000 |
| 2 | Կարի մեքենա Singer Confidence 7470 | 1 | 8 | 20000 |
| 3 | Պրոյեկտոր OPTOMA + էկրան | 2 | 8 | 30000 |
| 4 | Մանեկեն + հենակ | 1 | 3 | 1000 |
| 5 | ARIS պրոյեկտորի էկրանի հենակ | 1 | 11 | 15000 |
| **Ընդամենը** | | **6** | **38** | **86000** |

Վարչատնտեսական բաժնի պետ՝

Պողոսյան Կամո

ՄԱՍՆԱՏՈՒ ՓՈՍՏԱՅԻՆ ՀԱՄԱՐ 01538293

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 748 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-002-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 22-ի N 01.1/14-2/15259-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N ԱԳ/ԱնՄ-2-1/8775-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 25-ի N 06/3-8/32430-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (85 տեղ, 3,670 կգ ընդհանուր քաշով, 52,677 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, որից փոխադրման ծախսերը կազմել են 2,677 ԱՄՆ-ի դոլար, բաշխման ցանկը կցվում է, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» ծրագրի մասին» N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին, Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի և Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի

**ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ կոնտեյներ)**

Կոնտեյների համարն է՝ MEDU 825912-0: Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 52677.00 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 2677.00 ԱՄՆ դոլար, քաշը՝ 3670.00 կգ, տեղերի քանակը 85:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 800 | Հատ | Մանկական սպասք | | **4373.35** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական սպասք | | **4373.35** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Իջևանի տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական սպասք | | **4373.35** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական սպասք | | **4373.35** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական սպասք | | **4373.35** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական սպասք | | **4373.35** | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |

02528756
ՎԻ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 800 | Հատ | Մանկական սպասք | | 4373.35 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական սպասք | | 4373.35 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 800 | Հատ | Մանկական սպասք | | 4373.35 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 500 | Հատ | Մանկական սպասք | | 2733.34 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 500 | Հատ | Մանկական սպասք | | 2733.34 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 500 | Հատ | Մանկական սպասք | | 2733.34 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 936 | Հատ | Մանկական սպասք | | 5116.83 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 3670.00 | 52677.00 | |

02528755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 749 -Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 25-Ի N Մ-1448-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(«Մայրի» հասարակական կազմակերպություն)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 31-ի N 01.1/14-2/15857-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 06/3-8/33671-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 25-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի դեկտեմբերի 27-ի N Մ-1310-Ա որոշմամբ հաստատված ծրագրին հարակից գործարքի մասին» N Մ-1448-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2015 թվականի օգոստոսի 8-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 140,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի օգոստոսի 22-ին կնքված N 06-0035-11 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2017 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 28,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 750 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1 («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 25-ի N 01.1/14-2/15486-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 25-ի N 06/3-8/32431-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմենիա Թի Վի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01529346) 2017 թվականի օգոստոսի 14-ին կնքված N 1869-140817 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհման արարողության սուրդո թարգմանության, ինչպես նաև վերջինիս հայերեն և անգլերեն տարբերակների մոնտաժի կատարում՝ 275,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 751 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 19-Ի N Մ-086-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 2 («ՀԱՅԱՍՏԱՆԻ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 31-ի N 01.1/14-2/15862-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 06/3-8/33670-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի փետրվարի 19-ի «Հայաստանի զարգացման նախաձեռնություններ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շնորհում» ծրագրի մասին» N Մ-086-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2017 թվականի օգոստոսի 14-ին կնքված N 1583-040517 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է «Ավրորա» միջազգային մարդասիրական մրցանակի շրջանակներում միջոցառումների անցկացում՝ 916,630 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 752 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 24-Ի N Մ-1068-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1 («ՏԱԹԵՎԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴ» ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 30-ի N 01.1/14-2/15854-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 4-ի N 06/3-8/33958-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Սահմանել, որ «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 24-ի «Տաթևի վերածնունդ» հիմնադրամի կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1068-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

- «Սիսիանի (Նոր Բակ) «Նորոգշին» ԲԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09806674) 2017 թվականի օգոստոսի 15-ին կնքված N 1835-260717 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տաթևի վանական համալիրի ջրամատակարարման և ջրահեռացման ցանցի մասնակի կառուցման աշխատանքների իրականացում՝ 7,741,882 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 753 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-064-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 11-ի N 01.1/14-2/14612-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 11-ի N 06/3-8/30168 -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-064-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2017 թվականի հուլիսի 7-ին կնքված N 009/SCI-ARM/ACHE/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Վարսեր, Գեղարքունիք և Վաղաշեն համայնքներում գտնվող դպրոցներում դասարանների և սանհանգույցների վերանորոգում՝ 13,145,257 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2)«Սենդա» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00088004) 2017 թվականի օգոստոսի 1-ին կնքված N 010/SCI-ARM/ACHE/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է նախադպրոցական խմբասենյակների համար կահույքի պատրաստում և անվճար առաքում՝ 4,397,500 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Վ. Ն. Ս. ՇԻՆ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06940186) 2017 թվականի հուլիսի 7-ին կնքված N 008/SCI-ARM/ACHE/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Լոռու մարզի Արջուտ և Գեղասար համայնքներում գտնվող դպրոցներում դասարանների և սանհանգույցների վերանորոգում՝ 9,562,778 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Գեղարքունիքի, Լոռու մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ ՈՒ Մ**
**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 754 - Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-064-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 4-ի N 01.1/14-2/16001-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 4-ի N 06/3-8/33960 -17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-064-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01551651) 2017 թվականի հուլիսի 1-ին կնքված N 2017/703 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ինտերնետային հաղորդակցության ծառայությունների մատուցում՝ 228,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ | Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 755 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-1353-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 29-ի N 01.1/14-2/15708-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 06/3-8/33678-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Ամառային ճամբար» ծրագրի մասին» N Մ-1353-Ա որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

4) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի «Ծաղկաձոր» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2015 թվականի հուլիսի 4-ին կնքված N 369098802 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 1,666,667 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի մարտի 10-ին կնքված N 369098802 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 1,333,333 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 756 -Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 14-Ի N Մ-1354-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՏԻՐԱՄԱՅՐ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԿՈՒՍԱՍՏԱՆ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 29-ի N 01.1/14-2/15711-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 06/3-8/33677-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի դեկտեմբերի 14-ի «Տիրամայր Հայաստանի կուսաստան» բարեգործական կազմակերպության կողմից իրականացվող «Անհոգ մանկություն, ապահով ծերություն» ծրագրի մասին» N Մ-1354-Ա որոշման 2-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

4) «Շիրակ-ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531223) 2010 թվականի հունվարի 18-ին կնքված N 402654358 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 1,666,667 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի և Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի փետրվարի 1-ին կնքված N 402654358 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 1,333,333 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 757 -Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2015 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 13-Ի N Մ-1198-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («ՍՈՒՐԲ ԿԱՄԻԼԼՈ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 29-ի N 01.1/14-2/15707-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 06/3-8/33669-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2015 թվականի նոյեմբերի 13-ի «Սուրբ Կամիլլո» բարեգործական հիմնադրամ կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-1198-Ա որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

3) «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի «Կենտրոն-Արևմտյան» մասնաճյուղի հետ (ՀՎՀՀ՝ 02509667) 2009 թվականի օգոստոսի 25-ին կնքված N 704643082 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի հունվարի 1-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 4,000,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի փետրվարի 23-ին կնքված N 704643082 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2018 թվականի դեկտեմբերի 31-ը ջրամատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 3,200,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ու Մ**
**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 758 - Ա**
**քաղ. Երևան**

**ԿԱԼԻՖՈՐՆԻԱՅԻ ՀԱՅ ԱՏԱՄՆԱԲՈՒՅԺՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԺՊՏՈՒՆ ԱՏԱՄՆԵՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 4-ի N 01.1/14-2/15999-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 4-ի N 04/14/15531-17, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 03/07-1/11567-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 4-ի N ՆՁ/22.2/11011-17 և Հայաստանի Հանրապետության կառավարության առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 06/3-8/34122-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Կալիֆորնիայի հայ ատամնաբույժների ընկերության հայկական մասնաճյուղի (Հայաստանի Հանրապետություն, քաղաք Երևան, Եզնիկ Կողբացու 67, ՀՎՀՀ 02553123) կողմից իրականացվող՝ 52,750,000 դրամ արժողությամբ «Ժպտուն ատամներ» ծրագիրը (կցվում է):

2. Կալիֆորնիայի հայ ատամնաբույժների ընկերության հայկական մասնաճյուղին՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս.ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՍՏԱՏՎԱԾ Է**
**Կալիֆորնիայի հայ ատամնաբույժների ընկերության հայկական մասնաճյուղի տնօրեն Գ. Մինասյանի կողմից**
**25 օգոստոսի 2017թ.**

**«Ժ պ տ ու ն ա տ ա մ ն ե ր» ծրագիր**

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է՝ մասնագիտացված շրջող ավտոբուսով անվճար ատամնաբուժական ծառայությունների մատուցում դպրոցահասակ երեխաներին Հայաստանի Հանրապետության ողջ տարածքում: Սեպտեմբերից մինչև մայիս ավտոբուսը շրջում է Երևանի դպրոցներով, ամռան ամիսներին՝ հանրապետության տարածքով: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է օգտվել Հայաստանի Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | 1. «Կալիֆորնիայի հայ ատամնաբույժների ընկերություն» ոչ առևտրային կազմակերպություն, հասցե՝ P.O. BOX-2074, Glendale, CA 91209-2074, USA<br>2. «Փարոս» հիմնադրամ, 918 Parker street, #A-14, Berkeley, CA 94710, USA |
| 4. | Ծրագիրը կատարողը | Կալիֆորնիայի հայ ատամնաբույժների ընկերության հայկական մասնաճյուղ, հասցե՝ ՀՀ, քաղ. Երևան, Եզնիկ Կողբացու 67 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության ողջ տարածք, առողջապահական |
| 6. | Ծրագրի բյուջեն | 52,750,000 դրամ երեք տարվա համար |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայաստանի Հանրապետության դպրոցահասակ երեխաները |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 1 հոկտեմբերի 2017 թվական – 1 հոկտեմբերի 2020 թվական |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Անհրաժեշտ նյութերի ձեռքբերում՝ 7,200,000 դրամ ծրագրի ողջ իրականացման ընթացքում.<br>Աշխատավարձ (2 բժիշկ, 1 քույր և 1 ավտոբուսի վարորդ)՝ 19,500,000 դրամ ծրագրի ողջ իրականացման ընթացքում.<br>Վառելանյութ ավտոբուսի համար՝ 2,550,000 դրամ ծրագրի ողջ իրականացման ընթացքում.<br>Ավտոբուսի վերանորոգման ծախսեր՝ 2,400,000 դրամ ծրագրի ողջ իրականացման ընթացքում. |

Ա-11/2

| | | |
|---|---|---|
| | | Լրացուցիչ ավտոբուսի ներմուծում՝ 8,000,000 դրամ, 2018-2019 թվականների ընթացքում (ավտոբուսը շահագործվելու է նաև հետագայում իրականացվող ծրագրերի ընթացքում և բացառապես բարեգործական նպատակներով).<br>Լրացուցիչ ատամնաբուժական սարքավորումների ներմուծում՝ 3,000,000 դրամ, 2018-2019 թվականների ընթացքում.<br>Ատամների խնամքի պարագաների ներմուծում՝ 2,000,000 դրամ, 2018-2019 թվականների ընթացքում.<br>Կազմակերպական ծախսեր՝ 6,000,000 ծրագրի ողջ իրականացման ընթացքում.<br>Այլ չկանխատեսված ծախսեր՝ 2,100,000 ծրագրի ողջ իրականացման ընթացքում: |
| 10. | **Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը** | Անհրաժեշտ նյութերի ձեռքբերում՝ 7,200,000 դրամ.<br>Վառելանյութ ավտոբուսի համար՝ 2,550,000 դրամ.<br>Լրացուցիչ ավտոբուսի ներմուծում՝ 8,000,000 դրամ.<br>Լրացուցիչ ատամնաբուժական սարքավորումների ներմուծում՝ 3,000,000 դրամ.<br>Ատամների խնամքի պարագաների ներմուծում՝ 2,000,000 դրամ.<br>Ավտոբուսի վերանորոգման ծախսեր՝ 2,400,000 դրամ: |
| 11. | **Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը** | Կազմակերպական ծախսեր (տնօրենի, հաշվապահի աշխատավարձ)՝ 6,000,000 ծրագրի ողջ իրականացման ընթացքում: |
| 12. | **Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ** | Նախատեսվում է համագործակցություն ՀՀ կրթության և գիտության նախարարության, ինչպես նաև մարզպետարանների և համայնքային ծառայությունների հետ |
| 13. | **Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը** | «Կալիֆորնիայի հայ ատամնաբույժների ընկերության» և «Փարոս» հիմնադրամի հոգաբարձուների խորհրդներին պարբերաբար ներկայացվելու է հաշվետվություն, ինչպես նաև սահմանված կարգով ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ տեղեկատվություն ծրագրի իրականացման ընթացքի վերաբերյալ . |

ARMENIAN BRANCH 02553123

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 759 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 6-ի N 01.1/14-2/16173-17, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N ՌՄ/ԳՂ-2/8067-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սեպտեմբերի 6-ի N 06/3-8/34546-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Ֆրանսիայի հանձնախմբի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված Լուսաձոր համայնքի անասնապահական ֆերմերների համար նախատեսված ապրանքների և արևային մարտկոցների (6,030 կգ քաշով, 9,273.2 եվրո արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 7,445 եվրո, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Բեռն անհատույց հանձնվելու է «Հիմնատավուշ» հիմնադրամին:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Տավուշի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 760 - Ա**

**քաղ. Երևան**

## «ՀԱՅԱՍՏԱՆ» ՀԱՄԱՀԱՅԿԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ ( N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 8-ի N 01.1/14-2/1634117 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սեպտեմբերի -ի N 06/3-8/34843-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից ARMENIA FUND INCORPORATED մասնաճյուղի կողմից «Հայաստան» համահայկական հիմնադրամի հասցեով ուղարկված պատգարակների, էլեկտրական և ձեռքի կառավարման սայլակների ու հիգիենիկ խնամքի պարագաների (604 կգ քաշով, 7,200 ԱՄՆ-ի դոլար արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 300 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

Սարքերն անհատույց հանձնվելու են Արցախի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին՝ Արցախի Ազատամարտի հաշմանդամ վետերանների միջև բաշխելու համար:

2. «Հայաստան» համահայկական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Արցախի Հանրապետության կառավարություն, Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 761 - Ա**

**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ «Ա. ԹԱԽՏԱՋՅԱՆԻ ԱՆՎԱՆ ԲՈՒՍԱԲԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ՊՈԱԿ-Ի ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 31-ի N 01.1/14-2/15860-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 06/3-8/34133-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Գերմանիայի Սենկենբերգի հետազոտական ինստիտուտի ֆինանսավորմամբ՝ «Բուսականության և բուսական ռեսուրսների փոփոխությունը Հարավային Կովկասում – բույսերի բազմազանությունը ժամանակի և տարածության մեջ» ծրագրի շրջանակներում, Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ի հասցեով ուղարկված միկրոսկոպի և թվային կամերայի (12,239.40 եվրո արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 600 եվրո, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիայի «Ա. Թախտաջյանի անվան բուսաբանության ինստիտուտ» ՊՈԱԿ-ին՝ նշված բեռը ձևակերպելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության գիտությունների ազգային ակադեմիա:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-762-Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 29-Ի N Մ-002-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ N 1 («ՎՈՐԼԴ ՎԻԺՆ ԻՆԹԵՐՆԵՅՇՆԼ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 01.1/14-2/16087-17, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N ԱԳ/ԱնՄ-2-1/9111-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 4-ի N 06/3-8/33961-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության ԱՄՆ-ի գրասենյակի կողմից «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (38 արկղ, 240 կգ ընդհանուր քաշով, 14,560.50 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժեքով, ներառյալ 2,560.50 ԱՄՆ-ի դոլար փոխադրման ծախսերը, բաշխման ցանկը կցվում է, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի հունվարի 29-ի «Վորլդ վիժն ինթերնեյշնլ» միջազգային բարեգործական կազմակերպության հայաստանյան մասնաճյուղի կողմից իրականացվող «Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում» ծրագրի մասին» N Մ-002-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե, Երևանի քաղաքապետին և Հայաստանի Հանրապետության Արագածոտնի, Գեղարքունիքի, Լոռու, Շիրակի, Սյունիքի, Տավուշի մարզպետներին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

Վորլդ Վիժն Ինթերնեյշնլ ՄԲԿ հայաստանյան մասնաճյուղի հասցեով ԱՄՆ-ից ստացվող բեռի

**ԲԱՇԽՄԱՆ ՑՈՒՑԱԿ (մեկ պալետ)**

Nr 11/3.14

Բեռի ընդհանուր արժեքը կազմում է 14560.50 ԱՄՆ դոլար, որից տրանսպորտային ծախսերը կազմում են 2560.50 ԱՄՆ դոլար, քաշը՝ 240.00 կգ, տեղերի քանակը 38 արկղ:

| Քանակ | Չափման միավոր | Նկարագրություն | Քաշը (կգ.բր.) | Գինը (ԱՄՆ դոլար) | Բաշխման վայրը, ՀՀ Կառավարության ԲԾՀՀ որոշումը |
|---|---|---|---|---|---|
| 25 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1040.04 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գյումրու տարածաշրջան) |
| 25 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1040.04 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Իջևանի տարածաշրջան) |
| 25 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1040.04 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Վարդենիսի տարածաշրջան) |
| 25 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1040.04 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ալավերդու տարածաշրջան) |
| 25 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1040.04 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Կապանի տարածաշրջան) |
| 25 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1040.04 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Սիսիանի և Գորիսի տարածաշրջան) |

02528755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

Ա-11/3.14

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 25 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1040.04 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Թալինի տարածաշրջան) |
| 25 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1040.04 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Գավառի տարածաշրջան) |
| 25 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1040.04 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ստեփանավանի տարածաշրջան) |
| 25 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1040.04 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ամասիայի տարածաշրջան) |
| 25 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1040.04 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Ապարանի տարածաշրջան) |
| 25 | Հատ | Ձմեռային հագուստ | | 1040.04 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Նոյեմբերյանի տարածաշրջան) |
| 50 | Հատ | Ձմեռային հագուստ | | 2080.02 | Մ-002-Ա Բարեգործական բեռների ներմուծում և անհատույց բաշխում Հայաստանի տարածաշրջաններում (Երևանի Քանաքեռ- Զեյթուն վարչական շրջան) |
| | | ԸՆԴԱՄԵՆԸ | 240.00 | 14560.50 | |

02528755
ՎՎ ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՄԱՍՆԱՃՅՈՒՂ
WV ARMENIAN BRANCH

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 763 - Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-064-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ N 1 («ՍԵՅՎ ԴԸ ՉԻԼԴՐԵՆ ԻՆԹԵՐՆԵՇՆԼ» ՀԱՅԱՍՏԱՆՅԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 8-ի N 01.1/14-2/16340-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 06/3-8/34610-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից կնքված՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Սեյվ դը չիլդրեն Ինթերնեշնլ» հայաստանյան ներկայացուցչության կողմից իրականացվող ծրագրի մասին» N Մ-064-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպրոեկտ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02244386) 2017 թվականի օգոստոսի 30-ին կնքված N 012/SCI-ARM/ACHE/17 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Գեղարքունիքի մարզի Վարսեր համայնքում գտնվող դպրոցի ջրագծի և կոյուղագծի կառուցման աշխատանքների և Գեղարքունիք համայնքում գտնվող դպրոցի նախակրթարանի պահուստային ջրի բաքի տեղադրման աշխատանքների իրականացում՝ 741,258 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 764 - Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 30-Ի N Մ-706-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ (ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ՍԵՅՍՄԻԿ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԱՐԵՎՄՏՅԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ» ՊՈԱԿ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ-ի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի N 1/15.1/9951-17 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 4-ի Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 30-ի «Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության «Սեյսմիկ պաշտպանության արևմտյան ծառայություն» ՊՈԱԿ-ի հասցեով ստացված բեռի ներմուծման ծրագրի մասին» N Մ-706-Ա որոշման 1-ին կետում «17,790 կգ» բառերը փոխարինել «18,720 կգ» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**08 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-765- Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N Մ-273-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ

(Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 29-ի N 01.1/14-2/15706-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 1-ի N 06/3-8/33672-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության կողմից ուղարկված՝ Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի հասցեով ստացված բեռը (4 հատ թթվածնի կոնցենտրատորի զտիչ՝ 1 արկղ, 11 կգ քաշով, 365.64 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմել են 282.25 եվրո, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի «Ֆրանսիայի «Բժիշկներ՝ առանց սահմանների» միության հայաստանյան մասնաճյուղի կողմից 2017-2018 թվականներին իրականացվող «Հայաստանի Հանրապետությունում տուբերկուլյոզի կառավարման ազգային ծրագրի բարելավմանն ուղղված համապարփակ աջակցություն» ծրագրի մասին» N Մ-273-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**08 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-766- Ա**
**քաղ. Երևան**

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 31-ի N 01.1/14-2/15906-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 4-ի N ՆՁ/22.2/11019-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 4-ի N 06/3-8/33860-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ՀԱՆ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից ձեռք բերված «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (ակնաբուժական վիրահատական պարագաներ՝ 1 տեղ, 2.4 կգ ընդհանուր քաշով, 2,210 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» մաքսատունվարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
## ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**08 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-767- Ա**

**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի N Մ-670-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ

(«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի օգոստոսի 9-ի և 10-ի NN 5/08.2/51643-17, 5/08.2/51654 գրությունները և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 15-ի N 01.1/14-2/14875-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 21-ի N 06/3-8/31417-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 04.07.2017 թվականի հուլիսի 4-ին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 04.07.2017 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի ծրագրի մասին» N Մ-670-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Ֆլեշ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01808789) 2017 թվականի օգոստոսի 2-ին կնքված՝ N ԶԿՀ-ԳՀԱՊՁԲ-17/01-Ա պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով նախատեսված բենզինի ձեռքբերում՝ 915,750 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**08 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-768- Ա**

**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի N Մ-670-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ**

(«Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի օգոստոսի 17-ի N 5/08.2/51689-17 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 22-ի N 01.1/14-2/15256-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 24-ի N 06/3-8/32211-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 04.07.2017 թվականի հուլիսի 4-ին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 4-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Զանգեզուր» կենսոլորտային համալիր» ՊՈԱԿ-ի միջև 04.07.2017 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի ծրագրի մասին» N Մ-670-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Արկարգազ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09413044) 2017 թվականի օգոստոսի 7-ին կնքված՝ N ԶԿՀ-ԳՀԱՊՁԲ-17/02-Ա-1 պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով նախատեսված սեղմված բնական գազի ձեռքբերում՝ 540,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «ՎիլլաԳազ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 09704975) 2017 թվականի օգոստոսի 7-ին կնքված՝ N ԶԿՀ-ԳՀԱՊՁԲ-17/02-Ա-2 պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով նախատեսված սեղմված բնական գազի ձեռքբերում՝ 215,833 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**08 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-769- Ա**

**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 21-Ի N Մ-327-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ )

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի օգոստոսի 11-ի N 5/08.2/51663-17 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 15-ի N 01.1/14-2/14916-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 21-ի N 06/3-8/31601-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի ապրիլի 21-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Արփի լիճ» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի միջև 17.03.2016 թվականին կնքված դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի» ծրագրի մասին» N Մ-327-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պ.Շ.Ս.Վ.Ս.» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 05531929) 2017 թվականի օգոստոսի 8-ին կնքված՝ N «ԿԲՀ-ԱԱՊ-ՄԱ-ԱՊՁԲ-17/06» պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրերով նախատեսված սեղմված բնական գազի ձեռքբերում՝ 663,750 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**08 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-770- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 31-Ի N Մ-272-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** («Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ )

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության 2017 թվականի օգոստոսի 22-ի N 5/08.2/51705-17 գրությունը և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 25-ի N 01.1/14-2/15522-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 28-ի N 06/3-8/32795-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Սահմանել, որ «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված՝ դրամաշնորհային ծրագրի միջոցներով իրականացվող՝ ստորև նշված պայմանագրով նախատեսված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մարտի 31-ի «Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարության, Կովկասի բնության հիմնադրամի և «Խոսրովի անտառ» պետական արգելոց» ՊՈԱԿ-ի միջև 12.03.2015 թվականին կնքված՝ դրամաշնորհի պայմանագրի շրջանակներում ֆինանսավորվող 2017 թվականի» ծրագրի մասին» N Մ-272-Ա որոշմամբ (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 12-ի N Մ-404-Ա որոշման խմբագրությամբ) հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Թեմուր Գալստյան» Ա/Ձ-ի հետ (ՀՎՀՀ՝ 40514777) 2017 թվականի օգոստոսի 18-ին կնքված՝ N ԽԱՊԱ-ԳՀԱՊՁԲ-17/01 պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրով նախատեսված ավտոմեքենաների համասեզոնային անիվների ձեռքբերում՝ 1,052,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**08 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-771- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՅԵՄԲԵՐԻ 11-Ի N Մ-1067-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ** (Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղ (WWF-Armenia)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 25-ի N 01.1/14-2/15523-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 25-ի N 06/3-8/32492-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ Բնության համաշխարհային հիմնադրամի հայաստանյան մասնաճյուղի (WWF-Armenia) կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի նոյեմբերի 11-ի «Դիլիջան» ազգային պարկում կովկասյան ազնվացեղ եղջերուի վերաբնակեցում» ծրագրի մասին» N Մ-1067-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Պրոֆպանել» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02809799) 2017 թվականի օգոստոսի 14-ին կնքված՝ N 001 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է Տավուշի մարզի «Դիլիջան» ազգային պարկի տարածքում կովկասյան ազնվացեղ եղջերուի բազմացման կենտրոնի անձնակազմի տնակի համար արևային վահանակների համակարգի պատրաստման, տեղադրման և երաշխիքային ժամկետի ընթացքում համակարգի սպասարկման աշխատանքների իրականացում՝ 3,964,996 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության բնապահպանության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**08 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-772- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ** («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 6-ի N 01.1/14-2/16172-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 06/3-8/34608-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ ՀՀ-ի հիմնադիր «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական գրասենյակի կողմից ձեռք բերված «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի հասցեով ստացված բեռը (ակնային ստուգումների համար՝ ռետինալ խցիկ և համակարգիչ՝ 2 տեղ, 24 կգ ընդհանուր քաշով, 14,235 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծվում է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**08 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-773-Ա**
**քաղ. Երևան**

# «ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐԻՏԱՍ» ԲԱՐԵՍԻՐԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 08-ի N 01.1/14-2/16342-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 08-ի N 06/3-8/34845-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Բարեգործական որակել «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության հասցեով Ավստրիայից, «Ավստրիական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպության կողմից, որպես նվիրատվություն, «Էմիլի-Արեգակ» բազմակի հաշմանդամություն ունեցող երեխաների ցերեկային խնամքի կենտրոնի ջեռուցման համակարգի վերանորոգման աշխատանքների համար ստացված բեռի (2 տեղ, 215 կգ քաշով, 5,140.61 եվրոյին համարժեք դրամ արժեքով, փոխադրման և այլ ծախսերը կազմել են 899 եվրո, ցանկը կցվում է, «Հյուսիսային» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. «Հայկական Կարիտաս» բարեսիրական հասարակական կազմակերպությանը՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումից հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզպետին:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

«Հայկական Կարիտաս» ԲՀԿ-ի «Էմիլի Արեգակ»
հաշմանդամություն ունեցող ցերեկային խնամքի կենտրոնին
նվիրաբերվող իրերի ցանկ

| N | Ապրանքի անվանում | Տեղ | Քաշ բրուտո (կգ) | Քաշ նետտո (կգ) | Գին (Եվրո) | Ինվոյս N |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Խամութներ մետաղյա | 1 | 42,1 | 21,7 | 515,6 | 147106 |
| 2 | Պղնձյա ստորջրյա մալուխ իր իզոլացնող պլաստիկ խողովակով 100մ | | 84,8 | 56,6 | 946,78 | |
| 3 | Խողովակի կցամասեր մետաղապլաստից, միակցիչ իր իզոլացնող շապիկով | | 4,1 | 2,3 | 246,74 | |
| 4 | Խորքային պոմպ Grundfos SP17-12 12A01912, միաստիճան | 1 | 84 | 70,3 | 3431,49 | |
| | | 2 | 215 | 150,9 | 5140,61 | |

Գագիկ Տարասյան

Գործադիր տնօրեն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 774 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՎԱՐԴԱՆՅԱՆ ԸՆՏԱՆԻՔ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԼԱԲՈՐԱՏՈՐ ՍԱՐՔԱՎՈՐՈՒՄՆԵՐԻ ՆՎԻՐԱԲԵՐՈՒՄ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N 01.1/14-2/15468-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի օգոստոսի 23-ի N 04/14/14958-17, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության 2017 թվականի օգոստոսի 24-ի N ՆՁ/22.2/10655-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 06/3-8/34121-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ   է.***

1. Բարեգործական որակել «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից իրականացվող՝ 74,274,351 դրամ արժողությամբ «Լաբորատոր սարքավորումների նվիրաբերում» ծրագիրը (կցվում է):

2. Սահմանել, որ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից ձեռք բերված ստորև նշված ապրանքները ներմուծվում են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի շրջանակներում՝

1) մոլեկուլային գենետիկ ախտորոշիչ հետազոտությունների, ֆիքվենավորման բժշկական սարքավորում, 89,236.20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Արարատյան» մաքսատուն-վարչություն.

2) բժշկական-լաբորատոր սարքավորում, 9,911.36 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» մաքսատուն-վարչություն.

3) բժշկական սարքավորում, 9,422.57 եվրոյին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «Արարատյան» մաքսատուն-վարչություն.

4) բժշկական սարքավորում, ռեագենտներ և լաբորատոր պարագաներ, 4,093.60 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 20,000 դրամ, «ԵՏՄ» բեռ.

5) լաբորատոր սարքավորումներ և հարակից պահեստամասեր, 21,421 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ՝ ներառյալ փոխադրման և այլ ծախսերը, «ԵՏՄ» բեռ.



6) լաբորատոր սարքավորումներ և պահեստամասեր, 4,442.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 16,400 դրամ, «ԵՏՄ» բեռ.

7) բժշկական ավտոմատ կաթիչներ, 1140 եվրոյին համարժեք դրամ արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 43,300 դրամ, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն

3. Սահմանել, որ «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի կողմից (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952) ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Alliance Global» FZ-LLC-ի հետ (office 1610, Concord Tower, Dubai Media City, UAE) 2017 թվականի հուլիսի 6-ին կնքված՝ N GC 071/2017 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է բժշկական սարքավորման տեղադրման ու կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 10,200 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Компания ГенЭра» ՍՊԸ-ի հետ (РФ, г. Москва, ул. Большая Очаковская, д. 47а, офис 504/11) 2017 թվականի հուլիսի 6-ին կնքված՝ N CG02160 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է լաբորատոր սարքավորումների տեղադրման ու կարգաբերման աշխատանքների իրականացում՝ 1,250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

4. «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամին՝ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ծրագրի կատարման մասին ամփոփ տեղեկատվություն:

5. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                    Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

«Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի տնօրեն Ա. Ղազարյանի կողմից

«15» օգոստոսի 2017.թ.

«Լաբորատոր սարքավորումների նվիրաբերում»
ծ ր ա գ ի ր

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր .Ռ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ-ին անհրաժեշտ լաբորատոր սարքերի, սարքավորումների ու պարագաների նվիրաբերում՝ չարորակ հիվանդություններով տառապող հիվանդների ախտորոշման համար: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | Ակնկալվում է ծրագրի շրջանակներում օգտվել ՀՀ հարկերի, տուրքերի և պարտադիր վճարների գծով օրենքով սահմանված արտոնություններից: |
| 3. | Բարեգործը | «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952) |
| 4. | Ծրագիրը կատարողը | «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամ (ՀՀ, քաղ. Երևան, Մասիսի 31, ՀՎՀՀ՝ 02269952) |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարության «Պրոֆեսոր .Ռ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ (ՀՀ, քաղ. Երևան, Հ. Ներսիսյան 7)՝ առողջապահական բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 74,274,351 դրամ: |



| | | |
|---|---|---|
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ առողջապահության նախարարության «Պրոֆեսոր .Ռ. Օ. Յոլյանի անվան արյունաբանական կենտրոն» ՓԲԸ (ՀՀ, քաղ. Երևան, Հ. Ներսիսյան 7, ՀՎՀՀ՝ 00010235):<br>Ընտրությունը կատարվել է համաձայն բարեգործությունը ստացողի աջակցության խնդրանքի: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017 թվականի հուլիսի 06-ից մինչև հոկտեմբերի 1-ը: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Լաբորատոր սարքերի, սարքավորումների և պարագաների ձեռքբերում, ներմուծում, տեղադրում ու կարգաբերում՝ 74,274,351 դրամ ընդհանուր արժողությամբ, նախատեսվում է իրականացնել 2017 թվականի հուլիսի 06-ից մինչև հոկտեմբերի 1-ն ընկած ժամանակահատվածում: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | 1. «Alliance Global» FZ-LLC-ից (ՄԱԷ) 99,436.20 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ մոլեկուլային գենետիկ ախտորոշիչ հետազոտությունների, ֆիքվենավորման բժշկական սարքավորման ձեռքբերում և ներմուծում: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է տրանսպորտային ծախս՝ 815 ԱՄՆ-ի դոլար և մոնտաժման աշխատանքներ 10,200 ԱՄՆ դոլար:<br>2. «GenDx»-ից (Նիդերլանդներ) 9,911.36 եվրոյին համարժեք դրամի բժշկական-լաբորատոր սարքավորման ձեռքբերում և ներմուծում: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է 515 եվրո տրանսպորտայինն ծախս:<br>3. «VWR International» GmbH-ից (Ավստրիա) 9,422.57 եվրոյին համարժեք դրամի բժշկական սարքավորում, ռեագենտների և լաբորատոր պարագաների ձեռքբերում և ներմուծում: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է 240 եվրո տրանսպորտային ծախս:<br>4. «ДиаВендор» ООО-ից (ՌԴ) 4,093.60 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի բժշկական սարքավորում, ռեագենտների և լաբորատոր պարագաների ձեռքբերում և ներմուծում: Տրանսպորտային ծախսերը կկազմի 20000 դրամ:<br>5. «Компания ГенЭра» ООО-ից (ՌԴ) 22,671 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի լաբորատոր սարքավորումների, լաբորատոր հարակից |

| | | |
|---|---|---|
| | | պահեստամասերի ձեռքբերում և ներմուծում: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է մոնտաժման և տրանսպորտային ծախսեր՝ 1250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, գինն իր մեջ ներառում է նաև 250 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ, որպես ոչ ռեզիդենտի շահութահարկի գումար:<br>6. «Диаэм» OOO-ից (ՌԴ) 4,442.80 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամի լաբորատոր սարքավորումներ, լաբորատոր պահեստամասերի ձեռքբերում և ներմուծում: Տրանսպորտային ծախսերը կկազմի 16400 դրամ:<br>7. «Eppendorf» AG-ից (Գերմանիա) 1140 եվրոյին համարժեք դրամի բժշկական ութ կանալային ավտոմատ կաթիչ /автомат. пипетка/ ձեռքբերում և ներմուծում: Տրանսպորտային ծախսերը, որը կկազմի 43300 դրամ: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Կազմակերպական ծախսեր չեն նախատեսվում: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Չի նախատեսվում: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողությունն իրականացվելու «Վարդանյան ընտանիք» բարեգործական հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի և ՀՀ կառավարությանն բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից՝ օրենքով սահմանված կարգով: |

Կազմեց՝ Տնօրեն Ա.Ղազարյան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**11 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-775- Ա**
**քաղ. Երևան**
(Որոշումն ընդունվել է 2017 թվականի սեպտեմբերի 8-ին)

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-040-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔԻ ՄԱՍԻՆ («Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 8-ի N 01.1/14-2/16309-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 11-ի N 06/3-8/35049-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության կողմից կնքված՝ ստորև նշված գործարքն անմիջականորեն կապված է Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-040-Ա որոշմամբ հաստատված ծրագրի իրականացման հետ և դրա համար ունի զգալի նշանակություն՝

«Արմենիա» հյուրանոցային համալիր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02504956) 2017 թվականի սեպտեմբերի 6-ին կնքված՝ N 1225222 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է ընթրիքի կազմակերպում՝ 3,080,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**08 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-776- Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-040-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպություն)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության 2017 թվականի օգոստոսի 22-ի և 24-ի գրությունները և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 30-ի N 01.1/ 14-2/15818-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սեպտեմբերի 1-ի N 06/3-8/33673-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ո ւ մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Օրրան» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-040-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2015 թվականի նոյեմբերի 27-ին կնքված՝ N 07-0012-6-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 110,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի օգոստոսի 22-ին կնքված՝ N 07-0012-6-1 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 90,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.»:

2) որոշմանը կից ծրագրի 10-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 2 | 27.11.15 | N 07-0012-6-1 | «Երևան Ջուր» ՓԲԸ | խմելու ջրի մատակարա- | 110,000 |



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | րում և ջրահեռացում | |
| | 22.08.17 | N 07-0012-6-1 | «Վեոլիա Ջուր» ՓԲԸ | խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում | 90,000 |

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հ[illegible]պետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների [illegible]:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**08 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-777- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 27-Ի N Մ-041-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Օրրան» բարե-գործական հասարակական կազմակերպություն)**

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Օրրան» բարեգործական հասարակական կազմակերպության 2017 թվականի օգոստոսի 22-ի ու 24-ի գրությունները և Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 30-ի N 01.1/14-2/15820-17 ու Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սեպտեմբերի 1-ի N 06/3-8/33674-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունվարի 27-ի «Օրրան-Վանաձոր» օգնություն կարիքավոր ընտանիքներին» ծրագրի մասին» N Մ-041-Ա որոշման (Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի հունիսի 2-ի N Մ-500-Ա որոշման խմբագրությամբ) մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«3) «Լոռի-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 06934743) 2013 թվականի նոյեմբերի 22-ին կնքված՝ N 218150806 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի հունվարի 1-ից մինչև օգոստոսի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 95,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝02655115) 2017 թվականի օգոստոսի 22-ին կնքված՝ N 218150806 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածում խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 85,000 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.»:

2) որոշմանը կից ծրագրի 10-րդ կետի 3-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.



| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 3 | 22.11.13 | N 218150806 | «Լոռի-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ | խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում | 95,000 |
| | 22.08.17 | N 218150806 | «Վեոլիա Ջուր» ՓԲԸ | | 85,000 |

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**
**08 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-778- Ա**
**քաղ. Երևան**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2016 ԹՎԱԿԱՆԻ ԱՊՐԻԼԻ 8-Ի N Մ-267-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ԿԻՑ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ («Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով «Հայկական ակնաբուժության նախագիծ» բարեգործական հիմնադրամի 2017 թվականի օգոստոսի 28-ի և սեպտեմբերի 1-ի NN ՀԱՆ/Նե/1217, ՀԱՆ/Նե/1222 գրությունները ու Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 8-ի N 01.1/14-2/16343-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի սեպտեմբերի 7-ի N 06/3-8/34609-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2016 թվականի ապրիլի 8-ի «Լույս՝ հայի աչքերին» (ութերորդ փուլ) ծրագրի մասին» N Մ-267-Ա որոշման մեջ և կից ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 2-րդ կետի 10-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «10) «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01555351) 2016 թվականի հունվարի 12-ին կնքված՝ N 07-0098-7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2016 թվականի ապրիլի 1-ից մինչև 2017 թվականի օգոստոսի 31-ն ընկած ժամանակահատվածում հիմնադրամի գրասենյակի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցում՝ 18,166 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի և «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 02655115) 2017 թվականի օգոստոսի 22-ին կնքված՝ N 07-0098-7 պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է 2017 թվականի սեպտեմբերի 1-ից մինչև 2019 թվականի մարտի 31-ը ընկած ժամանակահատվածում հիմնադրամի գրասենյակի խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայություն-ների մատուցում՝ 81,834 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի.».



2) որոշմանը կից ծրագրի 10-րդ կետի «ե» ենթակետի 5-րդ կետը և 11-րդ կետի 5-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.
«.ՀԱՀ-ի գրասենյակի խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 18,166 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի ըստ «Երևան Ջուր» ՓԲԸ-ի հետ 2016 թվականի հունվարի 12-ին կնքված՝ N 07-0098-7 պայմանագրի (ՀՎՀՀ՝ 01555351) և «.ՀԱՀ-ի գրասենյակի խմելու ջրի մատակարարում և ջրահեռացում՝ 81,834 դրամի չափով, առանց ավելացված արժեքի հարկի ըստ «Վեոլիա Ջուր» ՓԲԸ-ի հետ 2017 թվականի օգոստոսի 22-ին կնքված N 07-0098-7 պայմանագրի (ՀՎՀՀ՝ 02655115),»:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

**Ո Ր Ո Շ Ո Ւ Մ**

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 779 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱՐՄԻՐ ԽԱՉԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ «ԱՂԵՏՆԵՐԻ ՌԻՍԿԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ (ԱՌՆ) ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՔԱՐՏԵԶ ՀԱՄԱՅՆՔԻ ԴԻՄԱԿԱՅՈՒՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ» ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 25-ի N 01.1/14-2/15492-17, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարության 2017 թվականի օգոստոսի 22-ի N 04/14/14888-17, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության 2017 թվականի օգոստոսի 31-ի N 1/08/6/9631-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 25-ի N 06/3-8/32520-17 և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետարանի 2017 թվականի օգոստոսի 22-ի N 101/104.3/4191-17 եզրակացությունները, ո ր ո շ ու մ է.*

1. Բարեգործական որակել Հայկական կարմիր խաչի ընկերության (Հայաստանի Հանրապետություն, քաղ. Երևան, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023) կողմից իրականացվող՝ 9,435,000 դրամ արժողությամբ «Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) ճանապարհային քարտեզ համայնքի դիմակայունության համար» ծրագիրը (կցվում է):

2. Հայկական կարմիր խաչի ընկերությանը՝

1) սույն որոշման 1-ին կետում նշված ծրագրի իրականացման շրջանակներում մատակարար (կապալառու) կազմակերպությունների հետ կնքվելիք պայմանագրերի պատճենները ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով՝ «Ավելացված արժեքի հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի դրույթների համաձայն ավելացված արժեքի հարկից ազատվող ապրանքների ու ծառայությունների շրջանակը որոշելու համար.

2) մինչև յուրաքանչյուր եռամսյակին հաջորդող ամսվա 25-ը՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել տեղեկություններ տվյալ եռամսյակի ընթացքում՝ նշված ծրագրի շրջանակներում կազմակերպության կողմից, ինչպես նաև կազմակերպությանը



մատակարարված ապրանքների ու մատուցված ծառայությունների, իսկ ծրագրի ավարտից հետո մեկամսյա ժամկետում՝ ամփոփ տեղեկություններ ծրագրի կատարման մասին:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության արդարադատության նախարարություն, Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե և Հայաստանի Հանրապետության Լոռու մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է՝
Հայկական Կարմիր խաչի ընկերության
Գլխավոր քարտուղարի՝ Աննա Եղիազարյանի կողմից
«18» Օգոստոս 2017թ.

“Աղետների ռիսկի նվազեցման (ԱՌՆ) ճանապարհային քարտեզ համայնքի դիմակայունության համար”

# ԾՐԱԳԻՐ

| | | |
|---|---|---|
| 1. | Ծրագրի նպատակը | Նվազեցնել Հայաստանի առավել աղետավտանգ գյուղական համայնքներում բնակվող մարդկանց խոցելիությունը և ամրապնդել նրանց դիմակայունությունը: |
| 2. | Ծրագրի բարեգործական որակման նպատակը | ՀՀ օրենքներով սահմանված կարգով հարկային արտոնություններից օգտվելու նպատակով: |
| 3. | Բարեգործը | Կարմիր խաչի կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիա |
| 4. | Ծրագիրը կատարողը | Հայկական Կարմիր խաչի ընկերություն, Պարոնյան 21/1, ՀՎՀՀ 00006023 |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | ՀՀ Լոռու մարզ - Մեծ Պառնի համայնք:<br>Աղետների ռիսկի նվազեցման, դիմակայունության բարձրացման բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | **9.435.000 ՀՀ դրամ /18.870 Շվեյցարական ֆրանկ/ - առանց ԱԱՀ** |
| 7. | Բարեգործություն ստացողը | ՀՀ Լոռու մարզ - Մեծ Պառնի համայնքի բնակչություն: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01.07.2017 – 30.06.2018 |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի շրջանակներում ծավալվող գործողությունները լինելու են հետևյալ ուղղություններով՝<br>1. Համայնքի նախապատրաստվածություն<br>2. Շահագրգիռ կողմերի և նրանց ծրագրերի քարտեզավորում<br>3. Ռիսկերի և դիմակայունության մակարդակի բացահայտում<br>4. Դիմակայունության բարձրացմանն ուղղված ծրագրերի իրականացում |

2

| | | |
|---|---|---|
| | | Ծրագրի շրջանակներում նախատեսված են հետևյալ հիմնական գործողությունները՝<br><br>1. Նախաձեռնել համայնքային հանդիպումներ ծրագրի քննարկման, փորձի փոխանակման, հետագա պլանների մշակման համար, որտեղ ներգրավված կլինեն ծրագրի թիրախ համայնքի սոցիալական տարբեր խմբերի ներկայացուցիչները, ՀԿԽԸ ներկայացուցիչները, Լոռու մարզի փրկարար ծառայության ներկայացուցիչները: /բյուջեն **2.725.000** դրամ, ժամանակահատված՝ 01.08.2017թ.-30.06.2018թ./:<br>2. Դիմակայունության բարձրացման մոդելի քննարկում և իրականացում, որտեղ կբարձրացվի համայքի իրազեկվածությունը, կիրականացվի համայնքի աղետների ռիսկի, խոցելիության և կարողությունների գնահատում համայնքի ներկայացուցիչների կողմից, կմշակվի դիմակայունության բարձրացմանն ուղղված գործողությունների պլանը: /բյուջեն **1.150.000** դրամ, ժամանակահատված՝ 01.09.2017թ.-30.06.2018թ./:<br>3. Դիմակայունության բարձրացմանն ուղղված գործողությունների պլանի իրականացում, որտեղ քննարկումների արդյունքում կներկայացվեն կոնկրետ միջոցառումների առաջարկներ և ՀԿԽԸ կողմից հաստատվելուց հետո կֆինանսավորվեն: /բյուջեն **2.250.000** դրամ, ժամանակահատված՝ 01.10.2017թ.-30.06.2018թ./:<br>4. Նախաձեռնել հանդիպումներ բոլոր շահագրգիռ կողմերի հետ, որտեղ կքննարկվեն ծրագրի արդյունքները, կմշակվեն հետագա գործողությունների պլանները: Ամփոփման արդյունքում կվերամշակվի ծրագրի մոդելը և այն կտրամադրվի շահագրգիռ կողմերին: /բյուջեն **3.3100.000** դրամ, ժամանակահատված՝ 01.01.2018թ.-30.06.2018թ./: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Ձեռք բերվող ապրանքների և ծառայությունների համառոտ նկարագիր՝<br>1. Ծրագրի շրջանակներում նախատեսված հանդիպումները, դասընթացներն ու այլ նմանատիպ միջոցառումները իրականացնելու համար ձեռք են բերվելու գրենական պիտույքներ, սնունդ, վճարվելու է մասնակիցների համար գիշերավարձ և այլ ծախսեր, որի գումարը կազմում է **4.850.000** դրամ:<br>2. Դիմակայունության բարձրացման համայնքային ծրագրերի համար ձեռք են բերվելու նյութեր, ծառայություններ, որի գումարը կազմում է **2.250.000** դրամ: |

| | | |
|---|---|---|
| | | 3. Ծրագրի շրջանակներում տպագրվելու են նյութեր, կատարվելու են թարգմանություններ, որի գումարը կազմում է 1.460.000 դրամ:<br>4. Ծրագրի կազմակերպչական և պահպանման ծախսերը կամում են 875.000 դրամ, որը ներառում է գործունեության համար անհրաժեշտ մեքենաների վառելիք, պահպանման և այլ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի և կոմունալ, գովազդային նյութերի և այլ ծախսեր: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպչական ծախսերը | 1. Կազմակերպչական և պահպանման ծախսեր՝ 875.000 դրամ, որը ներառում է գործունեության համար անհրաժեշտ մեքենաների վառելիք, պահպանման և այլ ծախսեր, գրենական պիտույքներ, համակարգչի, կապի և կոմունալ, գովազդային նյութերի և այլ ծախսեր: |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | Ծրագիրը իրականացվելու է Լոռու մարզային փրկարար ծառայության հետ, Մեծ Պառնի համայնքի, ինչպես նաև ոլորտում գործող տեղական և միջազգային կազմակերպությունների հետ սերտ համագործակցությամբ: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Նախատեսվում է տրամադրել տարեկան և ավարտական հաշվետվություններ Կարմիր խաչի կարմիր մահիկի ընկերությունների միջազգային ֆեդերացիային, ինչպես նաև կատարվելու են պարբերաբար մոնիթորինգային այցեր նվիրատուների կողմից: Հայկական Կարմիր խաչի ընկերության Գործադիր կոմիտեի կողմից նույնպես իրականացվելու է Լոռու մարզում իրականացվող գործողությունների անմիջական վերահսկում: Նախատեսվում է կազմակերպել ծրագրի ավարտական արդյունքների, քաղած դասերի և փորձի վերաբերյալ հանդիպումներ Երևանում և Լոռու մարզում, ինչպես նաև ներկայացնել հաշվետվություններ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովին, ըստ սահմանված կարգի: |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 780 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 2)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 22-ի N 01.1/14-2/15258-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 23-ի N 06/3-8/32073-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանի ժողովրդական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված գրանիտի (77 տեղ, 156,930 կգ ընդհանուր քաշով, 72,881.25 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 19,500 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռի մոմավառության սրահի կառուցման համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 781 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N Մ-375-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

---

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 22-ի N 01.1/14-2/15270-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 25-ի N 06/3-8/32378-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2017 թվականի օգոստոսի 16-ի N 326 գրությունը,* ***ո ր ո շ ու մ  է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 12-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հաղիճի վանական համալիրի հոգևոր կառույցների վերականգնում» ծրագրի մասին» N Մ-375-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «01 հուլիս 2017 թ.» բառերը փոխարինել «01 դեկտեմբեր 2017 թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 782 -Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 12-Ի N Մ-376-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԺԱՄԿԵՏԸ ԵՐԿԱՐԱՁԳԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 22-ի N 01.1/14-2/15267-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի օգոստոսի 25-ի N 06/3-8/32376-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2017 թվականի օգոստոսի 16-ի N 325 գրությունը, **ո ր ո շ ո ւ մ   է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի մայիսի 12-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Հաղիճի վանական համալիրի բակի բարեկարգում» ծրագրի մասին» N Մ-376-Ա որոշմամբ հաստատված ծրագրի 8-րդ և 9-րդ կետերում «01 հուլիս 2017 թ.» բառերը փոխարինել «01 դեկտեմբեր 2017 թ.» բառերով:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ                                        Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 783 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 14-ի N 01.1/14-2/14737-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 06/3-8/34116-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված կերամիկական սալիկների (46 տեղ,103,415 կգ ընդհանուր քաշով, 73,294.29 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 15,800 ԱՄՆ-ի դոլար, «Արարատյան» Մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ու Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ - 784 - Ա**
**քաղ. Երևան**

## ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ ՀԱՍՑԵՈՎ ՍՏԱՑՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ (N 1)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 14-ի N 01.1/14-2/14741-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 06/3-8/34117-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայկական բարեգործական ընդհանուր միության միջոցներով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հասցեով ուղարկված կապարե փաթեթների (2,020 կգ ընդհանուր քաշով, 6,700 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ ընդհանուր արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը: Բեռը նախատեսված է Մայր Աթոռի մոմավառության սրահի կառուցման համար:

2. Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

### Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 785 -Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2013 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 17-Ի N Մ-352-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ԵՎ ՆՈՒՅՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

(Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի օգոստոսի 22-ի N 01.1/14-2/15257-17, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 06/3-8/34620-17 եզրակացությունները, ինչպես նաև հաշվի առնելով Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի 2017 թվականի օգոստոսի 16-ի N 327 և սեպտեմբերի 5-ի N 355 գրությունը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2013 թվականի մայիսի 17-ի «Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի կողմից իրականացվող «Արաբկիր եկեղեցու շինարարական աշխատանքներ» ծրագրի մասին» N Մ-352-Ա (2015 թվականի ապրիլի 17-ի N Մ-377-Ա և 2017 թվականի մարտի 10-ի N Մ-164-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրում կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և 2-րդ կետերում «1,479,016,240 դրամ» բառերը փոխարինել «1,882,148,590 դրամ» բառերով.

2) որոշմամբ հաստատված ծրագիրը շարադրել հետևյալ խմբագրությամբ (կցվում):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե.

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի
Շինարարական բաժնի տնօրեն
Մովսես եպիսկոպոս Բաբայան
05 սեպտեմբեր, 2017թ.

Արաբկիրի եկեղեցու շինարարական աշխատանքներ

N. 11/5.1

### Ծ Ր Ա Գ Ի Ր

| | | |
|---|---|---|
| 1 | Ծրագրի նպատակը | Ծրագրի նպատակն է կառուցել եկեղեցի Արաբկիր թաղամասում |
| 2. | Ծրագրի բարեգործական դրսևորման նպատակները | Նախատեսվում է ծրագրի շրջանակներում, օրենքով սահմանված կարգով օգտվել ավելացված արժեքի հարկի (ԱԱՀ) վճարումից ազատվելու արտոնությունից: |
| 3. | Բարեգործ (բարեգործները) | Հայկական Բարեգործական Ընդհանուր Միություն |
| 4. | Ծրագրի կատարողը | Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին, ՀՎՀՀ 04703401: |
| 5. | Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը | Ք. Երևան: Եկեղեցաշինական |
| 6. | Ծրագրի բյուջեն | Ծրագրի բյուջեն 1.882.148.590 ՀՀ դրամ, առանց ԱԱՀ:<br>1. 2013թ.- 628.800170 ՀՀ դրամ<br>2. 2014թ.-838.580.750 ՀՀ դրամ<br>3.2015թ.-11.635.320 ՀՀ դրամ<br>4.2017թ.- 403.132.350ՀՀ դրամ |
| 7. | Բարեգործություն ստացողը | Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին և հավատացյալ ժողովուրդը: |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 01 մայիս, 2013թ. – 12 հունվար, 2018թ: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսվում է կառուցել եկեղեցի Արաբկիր թաղամասում 1.882.148.590 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ:<br>2013թ. 1. հողային աշխատանքները կազմում են 47.260.800 ՀՀ դրամ:<br>2. հիմնակմախքի կառուցում 581.539.370 ՀՀ դրամ:<br>2014թ.<br>3. Հիմնակմախքի կառուցում՝ 450.640.00ՀՀ դրամ<br>4. Ներքին և արտաքին հարդարման աշխատանքներ՝ 387.940.750 ՀՀ դրամ<br>2015թ.<br>5. Տարածքի բարեկարգում՝ 11.635.320 ՀՀ դրամ<br>2017թ.<br>6.Եկեղեցու տանիքի քարե ծածկի փոխարինում թիթեղով իր հարակից աշխատանքներով՝ երկաթբետոնային աշխատանքներ, նոր զանգերի տեղադրում և ավտոմատ գործադրման համակարգի տեղադրում, ինչպես նաև նոր ավելացված բակային տարածքի բարեկարգման աշխատանքներ 403.132.350 ՀՀ դրամ:<br>Աշխատանքները իրականացվելու է «Այգեձոր » ՍՊԸ-ի կողմից (ՀՀ ք. Երևան, Աճառյան 35/3, ՀվՀՀ 00815501 ), պայմանագիր կնքված 15.01.2013թ. 01Շ/ 013: |
| 10. | Ձեռք բերվող ապրանքների, ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները, նախատեսվող գինը | Նախատեսվում է, իրականացնել Արաբկիր եկեղեցու շինարարությունը 1.882.148.590 ՀՀ դրամ գումարով՝ առանց ԱԱՀ: Եկեղեցու հիմնական ծավալը 30մx30մ,բարձրությունը՝ 42մ.: Կառուցվելու է տուֆ քարից, ունենալու է կամարաձև մուտքեր, զանգակատուն երիցատուն: Պահպանվելու է տարածքի լանդշաֆտը:<br>Շինարարական աշխատանքներն իրականացվում են « Այգեձոր» ՍՊԸ-ի կողմից: |

| | | |
|---|---|---|
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Այլ ծախսեր նախատեսված չեն |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների և այլ կազմակերպությունների հետ | Երևանի քաղաքապետարանի հետ: N· 11/5.1 |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրություն | Նախատեսվում է տեխնիկական հսկողություն՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի ճարտարապետաշինարարական և ֆինանսական բաժինների և ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի կողմից: Ծրագրի ավարտից հետո կտրվի ամփոփ տեղեկություն: |

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 786 - Ա**
**քաղ. Երևան**

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻ ՇՐՋԱՆԱԿՆԵՐՈՒՄ ԲԵՌՆԵՐԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ՄԱՍԻՆ
(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 6-ի N 01.1/14-2/16131-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 06/3-8/34300-17 եզրակացությունները,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից ձեռք բերված երկու խմբաքանակ բեռները ներմուծվում են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում» ծրագրի մասին» N Մ-1004-Ա (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա, դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա, 2017 թվականի հուլիսի 14-ի Մ-593-Ա և օգոստոսի 30-ի N Մ-709-Ա որոշումների խմբագրությամբ) որոշմամբ հաստատված ծրագրի շրջանակներում՝

1) Ռուսաստանից՝ կահույք, 118 տեղ, 210 կգ ընդհանուր քաշով, 407,395.74 ռուսական ռուբլի արժողությամբ, փոխադրման ծախսերը կազմել են 151,000 դրամ, ԵՏՄ բեռ.

2) Մեծ Բրիտանիայից՝ էլեկտրական հաղորդիչներ՝ 3 տեղ, 571 կգ ընդհանուր քաշով, 36,931.48 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժողությամբ, ներառյալ փոխադրման ծախսերը, «Արարատյան» ՄՎ:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**8 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 787 - Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱ-ԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2014 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 3-Ի N Մ-1004-Ա ՈՐՈՇՄԱՄԲ ՀԱՍՏԱՏՎԱԾ ԾՐԱԳՐԻՆ ՀԱՐԱԿԻՑ ԳՈՐԾԱՐՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

(«Այբ» կրթական հիմնադրամ)

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության 2017 թվականի սեպտեմբերի 7-ի N 01.1/14-2/16233-17 և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի 2017 թվականի սեպտեմբերի 5-ի N 06/3-8/34252-17 եզրակացությունները,* **ո ր ո շ ու մ է.**

1. Սահմանել, որ «Այբ» կրթական հիմնադրամի կողմից (ՀՎՀՀ՝ 01558429) կնքված՝ ստորև նշված պայմանագրերով նախատեսված գործարքներն անմիջականորեն կապված են Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2014 թվականի հոկտեմբերի 3-ի «Այբ» կրթական հիմնադրամի կողմից իրականացվող «Այբ» դպրոցի «Գ» մասնաշենքի կառուցում ծրագրի մասին» N Մ-1004-Ա որոշմամբ հաստատված (2015 թվականի նոյեմբերի 13-ի N Մ-1237-Ա, դեկտեմբերի 28-ի N Մ-1459-Ա, 2017 թվականի հուլիսի 14-ի N Մ-593-Ա և օգոստոսի 30-ի N Մ-709-Ա որոշումների խմբագրությամբ) ծրագրի իրականացման հետ և դրա համար ունեն զգալի նշանակություն՝

1) «Պրոֆ Ալ» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01831375) 2017 թվականի օգոստոսի 19-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է շինարարական աշխատանքների իրականացում՝ 5,878,009.60 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

2) «Գապէքս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 00801274) 2017 թվականի օգոստոսի 24-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է հայելիների տեղադրում՝ 416,671 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի.

3) «Ալֆա սերվիս» ՍՊԸ-ի հետ (ՀՎՀՀ՝ 01256129) 2017 թվականի օգոստոսի 28-ին կնքված պայմանագրում նշված գործարքը, որով նախատեսվում է մաքրման աշխատանքների իրականացում՝ 2,184,000 դրամի չափով՝ առանց ավելացված արժեքի հարկի:

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ**
**ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 սեպտեմբերի 2017 թվականի N Մ- 788 -Ա**
**քաղ. Երևան**

## «ՈՍԿՐԱԾՈՒԾԻ ԴՈՆՈՐՆԵՐԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՌԵԵՍՏՐ» ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀԻՄՆԱԴՐԱՄԻ ՀԱՍՑԵՈՎ ՈՒՂԱՐԿՎԱԾ ԲԵՌԻ ՆԵՐՄՈՒԾՄԱՆ ԾՐԱԳՐԻ ՄԱՍԻՆ

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի սեպտեմբերի 8-ի համաձայնեցման թերթը,* ***ո ր ո շ ու մ է.***

1. Բարեգործական որակել ԱՄՆ-ից՝ Ֆրիդա Ջորդանի կողմից «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամի հասցեով որպես օժանդակություն ուղարկված բեռի (ABDR էքստրակցիոն հավաքածու, ցենտրիֆուգայի սրվակներ՝ 1 տեղ, 26.5 կգ ընդհանուր քաշով, 5,065 ԱՄՆ-ի դոլարին համարժեք դրամ արժեքով, փոխադրման ծախսերը կազմում են 34.25 ԱՄՆ-ի դոլար, «Արևմտյան» մաքսատուն-վարչություն) ներմուծման ծրագիրը:

2. «Ոսկրածուծի դոնորների հայկական ռեեստր» բարեգործական հիմնադրամին՝ նշված բեռի համապատասխան ձևակերպումներն ավարտելուց հետո մեկամսյա ժամկետում՝ սահմանված կարգով Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով ներկայացնել ամփոփ տեղեկատվություն:

3. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության առողջապահության նախարարություն և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե:

**ՆԱԽԱԳԱՀ** **Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ
ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

**14 սեպտեմբերի 2017 թվականի N Մ-789-Ա**
**քաղ. Երևան**

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ 2017 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 4-Ի N Մ-683-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ Մ Ա Ս Ի Ն

**(Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամ)**

*Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովը, հիմք ընդունելով հանձնաժողովի որոշման նախագծի 2017 թվականի սեպտեմբերի 13-ի համաձայնեցման թերթը,* **ո ր ո շ ու մ է.**

1. Հայաստանի Հանրապետության կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողովի 2017 թվականի օգոստոսի 4-ի «Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի կողմից իրականացվող «Մեկ երեխա - մեկ համակարգիչ» ծրագրի մասին» N Մ-683-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1) որոշման 1-ին և 2-րդ կետերում «82,628,452.20 դրամ» բառերը փոխարինել «86,477,603,70 դրամ» բառերով.

2) որոշմանը կից ծրագիրը շարադրել նոր խմբագրությամբ (կցվում է):

2. Սույն որոշումն ուղարկել Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարություն, Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարություն, Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե ու Հայաստանի Հանրապետության Վայոց ձորի մարզպետին:

ՆԱԽԱԳԱՀ Ս. ՏԵՐ-ՍԻՄՈՆՅԱՆ

ՀԱՍՏԱՏՎԱԾ Է

**Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի գործադիր տնօրեն՝**

**Գոռ Գասպարյան**

**«11» սեպտեմբերի 2017 թ.**

## «Մեկ երեխա-մեկ համակարգիչ » ծրագիր

| | | |
|---|---|---|
| 1. | **Ծրագրի նպատակը** | Տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների կիրառման միջոցո կրթության որակի, մատչելիության և արդյունավետության բարձրացման նպատակ համար, ՀՀ կառավարությունը 2015 թվականի ապրիլի 9-ի N 15 արձանագրայի որոշմամբ հաստատել է «Առաջին դասարանի աշակերտներին անվճա համակարգիչ տրամադրելու՝ «Մեկ երեխա-մեկ համակարգիչ» փուլային ծրագրը փորձնական փուլի նկարագիրը»:<br>Ծրագրի նպատակն է առաջին դասարանի աշակերտներին անվճա համակարգիչ տրամադրելու՝ «Մեկ երեխա-մեկ համակարգիչ» փուլային ծրագր փորձնական փուլի ընթացքում ՀՀ Վայոց Ձորի մարզի պետական հանրակրթակա ուսումնական հաստատությունների տարրական դասարանների աշակերտներին դասվարներին անհատույց պլանշետների տրամադրումը: |
| 2. | **Ծրագրի բարեգործական որակման նպատակը** | Ծրագրի շրջանակներում օրենքով սահմանված կարգով օգտվել Հայաստան Հանրապետության հարկերի, տուրքերի, պարտադիր վճարների գծով օրենքո սահմանված արտոնություններից: |
| 3. | **Բարեգործը** | Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառո հիմնադրամ ( ք.Երևան, Ռուստամի 29/164, ՀՎՀՀ 02537635 ) |
| 4. | **Ծրագիրը կատարողը** | Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառո հիմնադրամ ( ք.Երևան, Ռուստամի 29/164, ՀՎՀՀ 02537635 ) |
| 5. | **Ծրագրի իրականացման վայրը և բնագավառը** | Վայոց Ձորի մարզ, պետական հանրակրթական ուսումնական հաստատություններ |

| | | |
|---|---|---|
| | | կրթության բնագավառ: |
| 6. | Ծրագրի բյուջեն | 86 477 603,70 (ութսունվեց միլիոն չորս հարյուր յոթանասունյոթ հազար վեց հարյուր երեք դրամ յոթանասուն լումա) ՀՀ դրամ: |
| 7. | Բարեգործություն ստացողը | Վայոց Ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնակա[ն] հաստատությունների 1-ից 4-րդ դասարանների աշակերտներ և դասվարնե[ր] (շահառուների ցանկը կցվում է Հավելված 1): |
| 8. | Ծրագրի իրականացման տևողությունը | 2017 հուլիսի 17-ից մինչև հոկտեմբերի 30-ը: Ծրագիրը կրելու է շարունակակա[ն] բնույթ՝ առաջիկա երկու տարվա համար: |
| 9. | Միջոցառումների նկարագրությունը և ժամկետները, անհրաժեշտ ֆինանսական միջոցների ծավալը | 2017թ-ի ընթացքում 674 հատ պլանշետների գնում 86 477 603,70 (ութսունվե[ց] միլիոն չորս հարյուր յոթանասունյոթ հազար վեց հարյուր երեք դրամ յոթանասու[ն] լումա) ՀՀ դրամի չափով: |
| 10. | Ձեռք բերվող (ներմուծվող) ապրանքների ու ծառայությունների համառոտ նկարագիրը, ծավալները և նախատեսվող գինը | Նախատեսվում է ազատ տնտեսական գոտում գրանցված «Թեքնոլոջի ընդ Սայնս Դայնամիքս» ՍՊԸ-ից ձեռք բերել 674 հատ 86 477 603,70 ՀՀ դրամ գումարի չափով ԱրմԹաբ պլանշետներ: Ակնկալվում է ԱԱՀ-ից, մաքսային տուրքերից և այլ պարտադիր վճարներից արտոնություն: |
| 11. | Ծրագրի իրականացման հետ կապված կազմակերպական ծախսերը | Չի նախատեսվում |
| 12. | Համագործակցությունը պետական կառավարման, տեղական ինքնակառավարման մարմինների, այլ կազմակերպությունների հետ | ՀՀ կրթության և գիտության նախարարություն ու Վայոց Ձորի մարզպետարան: |
| 13. | Ծրագրի արդյունավետության նկատմամբ վերահսկողության մեխանիզմների նկարագրությունը | Ծրագրի կառավարումը հանդիսանում է ՀՀ կրթության և գիտության նախարարության լիազորությունը, ըստ այդմ ստեղծվել է Ծրագրի կառավարման աշխատանքային խումբ: Ծրագրի վերահսկման նպատակով մշակվել են մշտադիտարկման մեխանիզմներ: Փորձնական փուլի ավարտին կիրականացվի արդյունքների ամփոփում և կպատրաստվի ամփոփ հաշվետվություն: Բացի այդ ՀՀ կառավարության բարեգործական ծրագրերի համակարգման հանձնաժողով կներկայացվի հաշվետվություն ծրագրի կատարման ընթացքի մասին: |

Կազմեց՝ Դասագրքերի և տեղեկատվական հաղորդակցման տեխնոլոգիաների շրջանառու հիմնադրամի ՏՀՏ մասնագետների ղեկավար Միքայել Մարտիրոսյան

Հավելված 1

Վայոց Ձորի մարզի պետական հանրակրթական ուսումնական հաստատությունների ցանկը

| N | Անունը | Հասցեն | Դասվարների թիվը | Աշակերտների քանակ |
|---|---|---|---|---|
| 1 | ք. Եղեգնաձորի Հ.Հովհաննիսյանի անվ. թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ | ք.Եղեգնաձոր Նարեկացի 12 | 3 | 66 |
| 2 | ք. Եղեգնաձորի թիվ 1 հիմնական դպրոց ՊՈԱԿ | ք.Եղեգնաձոր Վայքի 4 | 2 | 64 |
| 3 | գ. Ագարակաձորի Յու. Խաչատրյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Ագարակաձոր, փ.1, շենք 12 | 1 | 15 |
| 4 | գ. Աղավնաձորի Գ. Գրիգորյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Աղավնաձոր փ. 3, 33 շենք | 1 | 23 |
| 5 | գ. Աղնջաձորի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Աղնջաձոր | 1 | 6 |
| 6 | գ. Արենիի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Արենի | 1 | 26 |
| 7 | գ. Արտաբույնքի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Արտաբույնք | 1 | 13 |
| 8 | գ. Արփիի Վ. Լևոնյանի անվան միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Արփի փող. 1 շինություն 21 | 1 | 12 |
| 9 | գ. Գետափի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Գետափ | 1 | 18 |
| 10 | գ. Գլաձորի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Գլաձոր | 1 | 29 |
| 11 | գ. Մոզրովի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ.Մոզրով | 1 | 1 |
| 12 | գ. Գողթանիկի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ.Գողթանիկ | 1 | 2 |
| 13 | գ. Ելփինի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Ելփին | 1 | 11 |
| 14 | գ. Եղեգիսի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Եղեգիս կենտրոնական փ.2 | 1 | 5 |
| 15 | գ. Թառաթումբի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Թառաթումբ | 1 | 6 |
| 16 | գ. Խաչիկի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Խաչիկ | 1 | 13 |
| 17 | գ. Հերմոնի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ. Հերմոն | 1 | 3 |
| 18 | գ. Հորբատեղի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ.Հորբատեղ | 1 | 4 |
| 19 | գ. Հորսի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ.Հորս | 1 | 3 |
| 20 | գ. Մալիշկայի Մ. Լոմոնոսովի անվան թիվ 2 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Մալիշկա | 1 | 22 |
| 21 | գ. Մալիշկայի թիվ 1 միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Մալիշկա, փ. 8, շենք 76 | 1 | 24 |
| 22 | գ. Շատինի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Շատին | 1 | 23 |
| 23 | գ. Չիվայի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Չիվա փ. 5, շենք 9 | 1 | 7 |
| 24 | գ. Ռինդի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Ռինդ | 1 | 18 |
| 25 | գ. Սալիի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ.Սալլի | 1 | 2 |
| 26 | գ. Վարդահովիտի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ.Վարդահովիտ | 1 | 1 |
| 27 | գ. Վերնաշենի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Վերնաշեն Թանահատի փ. | 1 | 6 |
| 28 | գ. Քարագլխի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Քարագլխ, փ. 6, շենք 2 | 1 | 10 |
| 29 | ք. Ջերմուկի Մ. Գորկիի անվան թիվ 1հիմնական դպրոց ՊՈԱԿ | ք.Ջերմուկ Շահումյան 7 | 1 | 22 |
| 30 | ք. Ջերմուկի թիվ 3 հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ. Կեչուտ | 1 | 35 |
| 31 | ք. Վայքի թիվ 2 հիմնական դպրոց ՊՈԱԿ | ք.Վայք Ալավերդյան 17 | 3 | 71 |
| 32 | գ. Ազատեկի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Ազատեկ | 1 | 7 |
| 33 | գ. Արինի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Արին | 1 | 6 |
| 34 | գ. Արտավանի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Արտավան փ. 5, տուն 1 | 1 | 3 |
| 35 | գ. Բարձրունու միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Բարձրունի | 1 | 2 |
| 36 | գ. Գնդեվազի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Գնդեվազ | 1 | 8 |
| 37 | գ. Գոմքի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Գոմք | 1 | 2 |
| 38 | գ. Զառիթափի Ա.Մելիքյանի անվ. միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Զառիթափ | 1 | 22 |
| 39 | գ. Խնձորուտի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Խնձորուտ | 1 | 5 |
| 40 | գ. Կարմրաշենի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Կարմրաշեն 2-րդ փ., շենք 2 | 1 | 4 |
| 41 | գ. Հերհերի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ. Հերհեր | 1 | 8 |
| 42 | գ. Մարտիրոսի միջնակարգ դպրոց ՊՈԱԿ | գ.Մարտիրոս | 1 | 6 |
| 43 | գ. Սարավանի հիմնական դպրոց ՊՈԱԿ | 3 փողոց 25 | 1 | 3 |
| 44 | գ. Սերսի հիմնական դպրոց ՊՈԱԿ | գ.Սերս | 1 | 2 |
| 45 | Ջերմուկի կրթահամալիր | ք. Ջերմուկ | 1 | 40 |
| Ընդամենը | | | 50 | 679 |